

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության  
Կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Ջավադյան

---

2 դեկտեմբերի 2008թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ  
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՑՈՒՑԱԿՄԱՆ ԵՎ  
ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՄԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐ**

# ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

- 1) Սույն կանոններով սահմանվում են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» Բաց Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ Բորսա) կողմից կազմակերպվող շուկաներում արժեթղթերի ցուցակման և/կամ առևտրին թույլտվության պայմանները և գործընթացը, ինչպես նաև Բորսայում ցուցակված և ցուցակմանը ներկայացված արժեթղթերին և դրանց թողարկողներին (այսուհետ՝ թողարկող կամ ցուցակման համար դիմող թողարկող) ներկայացվող պահանջները և նրանց իրավունքներն ու պարտավորությունները:
- 2) Սույն կանոնները սահմանում են նաև արժեթղթերի առևտրի կասեցման և ցուցակման դադարեցման հիմքերը, պայմանները և համապատասխան գործընթացները, ինչպես նաև թողարկողների կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, Բորսայի կողմից արժեթղթերի ցուցակման և/կամ առևտրին թույլտվության վերաբերյալ որոշման ընդունման կարգը, արժեթղթերի ցուցակման պահպանման համար անհրաժեշտ պայմանները և ցուցակման պահպանման կարգը:

## Գլուխ 2. Կանոններում օգտագործվող հասկացությունները

- 1) Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.  
**«Արժեթղթի ցուցակում»** արժեթղթի ընդգրկումը բորսայական ցուցակում և թույլատրումը բորսայական առևտրին.  
**«Բորսայական ցուցակ»** արժեթղթերի ցուցակման մակարդակ, որում ընդգրկված արժեթղթերի և դրանց թողարկողների նկատմամբ սահմանված են միանման պահանջներ.  
**«Տեղեկատվական համակարգ»** Բորսայի պաշտոնական ինտերնետային կայք և/կամ առևտրային համակարգ.  
**«Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմին»** Բորսայի գործադիր մարմնի ղեկավար.  
**«Շուկա ստեղծող».** Բորսայի անդամ, որը Բորսայի կանոններով սահմանված կարգով Բորսայում ցուցակված որևէ դասի արժեթղթերի գինը պահպանելու, սահմանելու կամ կայունացնելու նպատակով իր անունից և իր հաշվին կնքում է տվյալ դասի արժեթղթերով գործարքներ.  
**«Արժեթղթի առևտրի կասեցում»** սույն կանոններով սահմանված դեպքերում և կարգով թողարկողի ցուցակված նույն դասի արժեթղթերով բորսայական առևտրի ժամանակավորապես դադարեցման գործընթաց.  
**«Արժեթղթերի ազատ շրջանառող մաս»** տեղաբաշխված բաժնետոմսերի մաս, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի պատկանում թողարկողի կառավարման մարմինների անդամներին, նշանակալից և խոշոր սեփականատերերին, թողարկողի դուստր ընկերություններին և/կամ պետությանը, ինչպես նաև եթե ցուցակմանը ենթակա բաժնետոմսերով ներկայացված բաժնետիրական կապիտալի 5% (հինգ տոկոսը) և ավելին հանդիսանում է մի անձի սեփականություն.  
**«Արժեթղթի ապացուցակում»** սույն կանոններով սահմանված կարգով Բորսայում ցուցակված նույն դասի արժեթղթերը բորսայական առևտրից հանելու գործընթաց.  
**«Բորսայական առևտուր»** Բորսայի կանոններով սահմանված կարգով Բորսայում կազմակերպվող արժեթղթերի հրապարակային առևտուր.  
**«Ցուցակված արժեթուր»** արժեթղթերի ցուցակման միջոցով բորսայական առևտրին թույլատրված նույն դասի արժեթղթեր, որոնք դեռևս արժեթղթի ապացուցակման միջոցով չեն հանվել բորսայական առևտրից.  
**«Ցուցակման պահպանում»** Բորսայի կողմից սույն կանոններով սահմանված կարգով Բորսայական ցուցակում ընդգրկված Արժեթղթերի ցուցակում պահպանման գործընթաց.  
**«Իրավասու ստորաբաժանում»** արժեթղթերը բորսայական առևտրին թույլատրման և բորսայական առևտրից հանելու գործառույթներն իրականացնող Բորսայի լիազորված միավոր.  
**«Սեփական կապիտալ»** Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներին (այսուհետ՝ ՀՀՀՀՍ) համապատասխան սեփական կապիտալի մասում ներառվող տարրերի հանրագումար, իսկ բանկային, վարկային և ներդրումային

կազմակերպությունների համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ընդհանուր կապիտալը.

«Շարունակական թողարկում» տասներկու ամսվա ընթացքում նույն տեսակի և/կամ դասի արժեթղթերի առնվազն երկու թողարկում: Նույն տեսակին են պատկանում նաև այն արժեթղթերը, որոնցով հավաստվող իրավունքներն էապես նույն բնույթն ունեն, սակայն տարբեր են մարման կամ այլ վճարումների ստացման առաջնահերթության, դրանցով վճարվող գումարի չափի և մարման ժամկետների պայմանները.

«Պետական պարտատոմսեր» Հայաստանի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության համայնքների կողմից օրենքով սահմանված կարգով թողարկված պարտատոմսեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսեր.

«Կորպորատիվ պարտատոմս» իրավաբանական անձի կողմից թողարկված և սույն կանոնների իմաստով պետական պարտատոմսեր չհամարվող պարտատոմսեր.

«Դիտորդ խորհուրդ» Բորսայի դիտորդ խորհուրդ:

- 3) Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) և Բորսայի կանոններով սահմանված նշանակությունները:

### **Գլուխ 3. Արժեթղթերի թույլատրումը կարգավորվող շուկայում բորսայական առևտրին**

- 1) Կարգավորվող շուկայում բորսայական առևտրի առարկա կարող են հանդիսանալ միայն այն արժեթղթերը, որոնց վերաբերյալ Օրենքի պահանջներին համապատասխան հրապարակվել է առևտրի ազդագրի՝ բացառությամբ, երբ սահմանված առևտրի ազդագրի փոխարեն հրապարակվել է տվյալ արժեթղթերի հրապարակային առաջարկի համար կազմված ազդագիրը, և թողարկողը կամ տեղաբաշխողը դիմում է շուկայում առևտրին թույլտվության համար տվյալ արժեթղթերի տեղաբաշխման ավարտից անմիջապես հետո, սակայն ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև Օրենքով սահմանված այլ դեպքերում:
- 2) Բորսայում առանց սահմանված առևտրի ազդագրի հրապարակման կարգավորվող շուկայում բորսայական առևտրի առարկա կարող են հանդիսանալ.
  - ա) Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ), Հայաստանի Հանրապետության համայնքների կողմից թողարկված կամ երաշխավորված արժեթղթերը.
  - բ) Կենտրոնական բանկի սահմանած օտարերկրյա պետությունների ցանկում ընդգրկված որևէ պետության, նրա կենտրոնական բանկի կամ տեղական կառավարման մարմնի կողմից թողարկված կամ երաշխավորված արժեթղթերը.
  - գ) Կենտրոնական բանկի սահմանած ցանկում ընդգրկված միջազգային կազմակերպությունների թողարկած ոչ բաժնային արժեթղթերը.
  - դ) կրոնական, կրթական, բարեգործական և այլ ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կրոնական, կրթական կամ բարեգործական նպատակներով թողարկված արժեթղթերը.
  - ե) բանկերի կողմից շարունակական ձևով թողարկվող ոչ բաժնային արժեթղթերը, եթե դրանք՝
    - փոխարկելի կամ փոխանակելի չեն,
    - չեն հավաստում որևէ այլ տեսակի արժեթղթերի ձեռքբերման կամ բաժանորդագրման իրավունքներ, ինչպես նաև կապված չեն ածանցյալ գործիքները,
    - հավաստում են դրամական միջոցների ավանդադրումը բանկում,
    - դրանց հատուցումը երաշխավորված է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.
  - զ) բանկերի կողմից շարունակական ձևով թողարկվող ոչ բաժնային արժեթղթերի վրա, եթե առաջարկվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը 12 ամսվա ընթացքում չի գերազանցում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված մեծությունը և դրանք՝

- փոխարկելի կամ փոխանակելի չեն,
- չեն հավաստում որևէ այլ տեսակի արժեթղթերի ձեռքբերման կամ բաժանորդագրման իրավունքներ, ինչպես նաև կապված չեն ածանցյալ գործիքների հետ.

ե) ստանդարտացված ածանցյալ գործիքները.

ը) դրամական շուկայի գործիքները:

- 3) Սույն գլխի 2-րդ կետում նշված արժեթղթերի առևտուրը կարգավորվում է Բորսայի կանոններով սահմանված կարգով:

#### **Գլուխ 4. Բորսայական ցուցակների կառուցվածքը**

- 1) Բորսայում ցուցակված արժեթղթերը ընդգրկվում են հետևյալ Բորսայական ցուցակներում.
  - ա) բաժնետոմսերի հիմնական ցուցակ (A).
  - բ) բաժնետոմսերի երկրորդային ցուցակ (B).
  - գ) պարտատոմսերի հիմնական ցուցակ (Abond).
  - դ) պարտատոմսերի երկրորդային ցուցակ (Bbond).
- 2) Բոլոր արժեթղթերը, որոնք չեն համապատասխանում Բորսայի ցուցակման ցուցակներում ընդգրկման պահանջներին թույլատրվում են առևտրին Բորսայի ազատ շուկայում:
- 3) Բորսայի ազատ շուկան կազմված է՝
  - ա) բաժնետոմսերի ազատ շուկա (C).
  - բ) պարտատոմսերի ազատ ցուցակ (Cbond):
- 4) Բոլոր արժեթղթերի առևտուրը իրականացվում է Բորսայի առևտրային համակարգի միջոցով:

## **ԲԱԺԻՆ II. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԵՎ ՑՈՒՑԱԿՄԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ**

#### **Գլուխ 5. Արժեթղթերի ցուցակման գործընթացը**

- 1) Արժեթղթի ցուցակման գործընթացի նպատակն է որոշել արժեթղթերի համապատասխանությունը Բորսայում ցուցակման համար, ինչպես նաև Բորսայական առևտրի թույլատրման համար սահմանված պահանջներին:
- 2) Մինչև ցուցակման գործընթացը սկսելը թողարկողը պետք է վճարի ցուցակման գործընթացը սկսելու համար՝ Բորսայի «Սակագների մասին» կանոններով սահմանված վճարը: Ցուցակման գործընթացը սկսելու համար Բորսային վճարված գումարը ենթակա չէ վերադարձման թողարկողին, նույնիսկ, եթե ցուցակման հայտը մերժվում է: Սահմանված վճարի կամ դրա վճարումը հաստատող փաստաթղթի բացակայության դեպքում թողարկողի կողմից ներկայացված Հայտը համարվում է չընդունված:
- 3) Արժեթղթի ցուցակման գործընթացը սկսում է, երբ Բորսան ընդունում է ցուցակմանը դիմող թողարկողի կողմից ներկայացված հայտ (այսուհետ՝ «Հայտ»):
- 4) Բորսան իրավունք ունի իր Տեղեկատվական համակարգի միջոցով հրապարակել արժեթղթի ցուցակման գործընթացը սկսելու վերաբերյալ տեղեկատվությունը:
- 5) Արժեթղթի ցուցակման գործընթացը դադարած է համարվում.
  - ա) Բորսայում արժեթղթի ցուցակման մասին որոշման (այսուհետ՝ ցուցակման որոշում) ուժի մեջ մտնելու պահից, կամ
  - բ) Բորսայում արժեթղթի ցուցակման մերժման մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից, կամ
  - գ) թողարկողի կողմից ներկայացված Հայտը հետ վերցնելու պահից, կամ
  - դ) սույն Կանոնների 6-րդ գլխի 6) կետով սահմանված հիմքով Հայտի մերժման պահից:

## **Գլուխ 6. Յուրացման մասին որոշում**

- 1) Արժեթղթերի ցուցակման կամ մերժման վերաբերյալ որոշում է կայացնում Բորսայում արժեթղթերը ցուցակող մարմինը՝ արժեթղթերի ցուցակման գործընթացի սկսման պահից երեք ամսվա ընթացքում, եթե ավելի կարճ ժամանակահատվածը սահմանված չէ Օրենքով: Եթե Բորսայում Արժեթղթեր ցուցակող մարմինը ցուցակման գործընթացի ժամանակ թողարկողից պահանջում է լրացուցիչ տեղեկատվություն կամ փաստաթղթեր, ապա Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը արժեթղթերի ցուցակման կամ մերժման վերաբերյալ որոշում է ընդունում՝ թողարկողից պահանջված ամբողջ տեղեկատվության ստացման պահից երեք ամսվա ընթացքում, բայց ոչ ուշ քան արժեթղթերի ցուցակման գործընթացի սկսման պահից վեց ամսվա ընթացքում, եթե այլ բան սահմանված չէ Օրենքով:
- 2) Արժեթղթերի ցուցակման մասին որոշումը կազմվում է գրավոր: Որոշման ուժի մեջ մտնելու ամսաթիվը պետք է նշված լինի որոշման մեջ: Այս ամսաթիվը որոշելիս, Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը պետք է հաշվի առնի ներդրողների շահերի պաշտպանության սկզբունքները: Ի լրումը սույն կանոններով սահմանված տեղեկատվությանը, Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի որոշումը պետք է պարունակի քննարկվող հարցի կամ հայտի բնութագիրը, ինչպես նաև գլուխ 8-ի 2-րդ մասով սահմանված աշխատանքային խմբի անդամների եզրակացությունը և առկայության դեպքում՝ Բորսայի Դիտորդ խորհրդի (այսուհետ՝ Դիտորդ խորհուրդ) կողմից համապատասխան հավանություն (թույլտվություն) որոշման բովանդակությունը:
- 3) Յուրացմանը ներկայացված արժեթղթերի ցուցակման առաջին օր է համարվում արժեթղթերի ցուցակման մասին որոշման ուժի մեջ մտնելուն հաջորդող վեցերորդ առևտրային օրը (ներառյալ), եթե այլ որոշում չի ընդունվում Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի կողմից:
- 4) Արժեթղթերի ցուցակման որոշման կայացման պահից վեց առևտրային օրվա ընթացքում նախքան արժեթղթերի ցուցակումը սկսելը, թողարկողը պետք է վճարի Բորսայի «Մակագների մասին» կանոններով սահմանված Բորսայական ցուցակում արժեթղթի ընդգրկման վճարը, որը ենթակա չէ վերադարձման: Եթե թողարկողը ուշացնում է սույն կետով սահմանված վճարի վճարումը, ապա թողարկողի արժեթղթերի ցուցակման առաջին օրը հետաձգվում է Բորսայական ցուցակում արժեթղթի ցուցակման վճարի վճարման ուշացման օրերի քանակով:
- 5) Արժեթղթերի ցուցակման կամ ցուցակման մերժման վերաբերյալ որոշումը կայացնելիս, Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը հիմք է ընդունում արժեթղթերի ցուցակման վերաբերյալ իր կողմից սահմանված պայմանները և թողարկողի կողմից ներկայացվող փաստաթղթերում արտացոլված տեղեկատվությունը, ներառյալ թողարկողի կողմից հրապարակված արժեթղթերի առևտրի ազդագիրը, ինչպես նաև Օրենքի և այլ իրավական ակտերի դրույթները:
- 6) Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը իրավունք ունի մերժել Արժեթղթերի ցուցակումը այն դեպքում, երբ չեն պահպանվել արժեթղթերի ցուցակման վերաբերյալ իր կողմից սահմանված պայմանները, ինչպես նաև կասկածելի, կեղծ, սուտ կամ թերի է թողարկողի կողմից ներկայացվող փաստաթղթերում արտացոլված տեղեկատվությունը: Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը իրավունք ունի մերժել Արժեթղթերի ցուցակումը նաև այն դեպքում, երբ թողարկողը և թողարկված արժեթղթերը համապատասխանում են սույն կանոններով սահմանված պայմաններին, սակայն թողարկողի ֆինանսական վիճակի, շուկայական դիրքի, հաճախորդների կառուցվածքի, աճի պոտենցիալի, կառավարման համակարգի, գործունեության ոլորտի, համբավի, ապագա հեռանկարների գնահատման կամ թողարկողի տնտեսական գործունեության, ինչպես նաև էական այլ ցուցանիշների գնահատման արդյունքում՝ Բորսայի արժեթղթերը ցուցակող մարմինը ունի հիմնավոր կասկածներ, որ ցուցակման մերժումը անհրաժեշտ է ներդրողների շահերը պաշտպանելու համար: Սույն կետի երկրորդ նախադասությամբ նախատեսված արժեթղթերի ցուցակման մերժման մասին որոշումը Բորսայում արժեթղթերը ցուցակող մարմինն իրավունք ունի կայացնելու միայն Բորսայի դիտորդ խորհրդի կողմից համապատասխան հավանություն (թույլտվություն) ստանալու պահից: Հայտի մերժման դեպքում, համապատասխան որոշման մեջ նշվում են մերժման հիմքերը:
- 7) Եթե ցուցակման հայտը մերժվում է, ապա թողարկողը իրավունք ունի ցուցակման նոր հայտ ներկայացնել ոչ շուտ, քան նախորդ հայտի մերժման ամսաթվից իննսուն օր հետո: Թողարկողի նոր հայտի հիման վրա Բորսայում արժեթղթերը ցուցակող մարմինը իրավունք ունի կրճատել այս ժամանակահատվածը:

- 8) Սույն կանոնների նպատակներից ելնելով, լրացուցիչ ցուցակման մասին որոշումը՝ ցուցակման որոշումն է, որի ընդունման պահին ցուցակմանը դիմող թողարկողի որևէ արժեքուղթ, արդեն իսկ ցուցակված է Բորսայում: Լրացուցիչ ցուցակման որոշումը կայացնում է Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը: Եթե վերջինս որոշում է կայացրել չբավարարել թողարկողի դիմումը լրացուցիչ ցուցակման վերաբերյալ, այն իրավունք ունի կասեցնել թողարկողի բոլոր ցուցակված արժեթղթերի առևտուրը կարգավորվող շուկայում սույն կանոնների 30-րդ գլխի 1) կետի դրույթների հիման վրա:
- 9) Արժեթղթի արդյունավետ իրացվելիության և Բորսայի (A), (B), (Abond) և (Bbond) ցուցակներում բաժնետոմսերի ընդգրկման նկատմամբ պահանջների ու չափանիշների ապահովման նպատակով, այն դեպքում, երբ Բորսայի ցուցակող մարմինը գտնում է, որ Բորսայի կանոններով սահմանված պահանջները կարող են խախտվել, Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինն իրավունք ունի ցուցակմանը դիմող թողարկողից պահանջել Բորսայի որևէ անդամի հետ կնքել ցուցակվող արժեթղթերի Շուկա ստեղծողի պայմանագիր:

### **Գլուխ 7. Պայմանական ցուցակման որոշում**

- 1) Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը իրավունք ունի կայացնել պայմանական ցուցակման մասին որոշում, եթե ցուցակմանը դիմող թողարկողը և/կամ իր կողմից թողարկված արժեթղթերը հայտի ներկայացման պահին չեն համապատասխանում սույն կանոններով սահմանված պայմաններին, սակայն Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը կարծում է, որ թողարկողը և նրա կողմից թողարկված արժեթղթերը կբավարարեն սույն կանոններով սահմանված պայմաններին արժեթղթերի ցուցակման արդյունքում:
- 2) Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը իրավունք ունի կայացնելու պայմանական ցուցակման որոշում միայն Դիտորդ խորհրդի կողմից համապատասխան հավանություն (թույլտվություն) ստանալու պահից:
- 3) Պայմանական ցուցակման որոշումը ուժի մեջ է մտնում այդ որոշման մեջ նշված ժամանակահատվածում, որի ընթացքում թողարկողը և իր կողմից թողարկված արժեթղթերը պետք է բավարարեն պայմանական ցուցակման որոշման մեջ նշված և Բորսայում արժեթղթերը ցուցակող մարմնի կողմից ներկայացված բոլոր պայմաններին և պահանջներին:
- 4) Պայմանական ցուցակման որոշմամբ ցուցակված արժեթղթերի ցուցակման առաջին օրն է համարվում պայմանական ցուցակման որոշման մեջ նշված բոլոր պայմանների բավարարման օրվանը հաջորդող վեցերորդ առևտրային օրը նեռարյալ:
- 5) Պայմանական ցուցակման որոշման մեջ նշված պայմանների բավարարումից անմիջապես հետո թողարկողը պարտավոր է անհապաղ Բորսա ներկայացնել պայմանական ցուցակման որոշման պայմանների բավարարման մասին տեղեկություն:
- 6) Եթե թողարկողին չի հաջողվում բավարարել պայմանական ցուցակման որոշման բոլոր պայմանները կամ թողարկողը կամ իր կողմից թողարկված արժեթղթերը չեն բավարարում սույն կանոններով սահմանված պահանջներին, ինչպես նաև եթե Բորսայի արժեթղթերը ցուցակող մարմինը պատճառներ ունի համարել, որ պայմանական ցուցակման որոշմամբ սահմանված ժամանակահատվածում թողարկողի կողմից խախտվել են Օրենքի դրույթները կամ արժեթղթերի առևտրի ազդագրի պայմանները, ապա Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը կարող է Հայտն ուղարկել նոր վերանայման:
- 7) Եթե պայմանական ցուցակման որոշումը ուղարկվել է վերանայման ապա Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինն իրավունք ունի.
  - ա) դիտարկել պայմանները որպես բավարարված; կամ
  - բ) տալ թողարկողին լրացուցիչ ժամանակ պայմանները կատարելու համար; կամ
  - գ) չեղյալ համարել պայմանական ցուցակման որոշումը:

### **Գլուխ 8. Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի իրավասությունները**

- 1) Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինն իրավասու է.

- ա) որոշում կայացնել արժեթղթերը Բորսայական ցուցակներում ընդգրկելու վերաբերյալ (ցուցակման որոշում)։
  - բ) որոշում կայացնել Արժեթղթերի ցուցակումը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ։
  - գ) որոշում կայացնել արժեթղթերը մեկ Բորսայական ցուցակից այլ ցուցակ կամ շուկա տեղափոխելու վերաբերյալ։
  - դ) որոշում կայացնել արժեթղթերը Բորսայական առևտրին թույլատրելու, առևտրի կասեցման կամ դադարեցման վերաբերյալ, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով։
  - ե) որոշում կայացնել Արժեթղթերի ցուցակումը մերժելու վերաբերյալ։
  - զ) որոշում կայացնել Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի իրավասությանը պատկանող որևէ բացառությունների վերաբերյալ, Օրենքով, իրավական ակտերով և սույն կանոններով սահմանված կարգով և սահմաններում՝ միայն Դիտորդ խորհրդի կողմից համապատասխան հավանություն (թույլտվություն) ստանալու դեպքում։
  - է) որոշում կայացնել Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի իրավասությանը պատկանող այլ խնդիրների վերաբերյալ՝ Օրենքով, իրավական ակտերով և սույն կանոններով սահմանված կարգով։
  - ը) Դիտորդ խորհրդին առաջարկություններ ներկայացնել սույն կանոններում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ։
- 2) Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը ցուցակման գործընթացը պատշաճ իրականացնելու նպատակով իր որոշմամբ ձևավորում է՝ երեք անդամներից բաղկացած աշխատանքային խումբ։ Աշխատանքային խմբի անդամները նշանակվում և ազատվում են Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի կողմից։
  - 3) Դիտորդ խորհրդի անդամները, Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը և աշխատանքային խումբի անդամները պետք է գաղտնի պահեն առևտրային կամ այլ գաղտնիք կազմող և/կամ ներքին ցանկացած տեղեկություններ, որին նրանք տեղեկացել են ցուցակման գործընթացի ընթացքում իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս։
  - 4) Սույն կանոնների նպատակներից ելնելով, ներքին տեղեկություն է համարվում ցանկացած տեղեկություն, որը հրապարակային չէ և օգտագործվում է սույն գլխի 3) կետում նշված անձանց կողմից արժեթղթերի ցուցակման, առևտրին թույլատրության, կասեցման կամ մերժման վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում, ինչպես նաև որոշում կայացնելու նպատակով, քննարկման ժամանակ սույն գլխի 3) կետում նշված անձանց կողմից հնչեցրած կարծիքները։

## **Գլուխ 9. Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի որոշման հրապակումը**

- 1) Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի կողմից արժեթղթերի ցուցակման կամ ցուցակման մերժման, ինչպես նաև առևտրին թույլտվության կամ մերժման վերաբերյալ որոշում կայացնելուց հետո Բորսան երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնում է թողարկողին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ին (այսուհետ՝ Կենտրոնական դեպոզիտարիա)։
- 2) Արժեթղթերի ցուցակման կամ ցուցակման մերժման մասին որոշումը՝ որոշման կայացման հաջորդ օրը հրապարակվում է Բորսայի Տեղեկատվական համակարգի միջոցով։
- 3) Եթե ցուցակման և/կամ առևտրին թույլտվության վերաբերյալ որոշումը բացասական է, ապա թողարկողին ուղղորդ որոշման մասին գրությունը պետք է պարունակի նաև ցուցակման մերժման պատճառների նկարագրերը։
- 4) Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը արժեթղթերի ցուցակման և/կամ առևտրին թույլտվության վերաբերյալ որոշում կայացնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում թողարկողի հետ կնքում է արժեթղթերի ցուցակման և/կամ առևտրին թույլտվության պայմանագիր։
- 5) Թողարկողը պարտավոր է վճարել Բորսայի «Սակագների մասին» կանոններով սահմանված վճարները, ներկայացնելով այդ վճարումները հավաստող փաստաթղթերը։
- 6) Թողարկողի ցուցակված և/կամ առևտրին թույլտվություն ստացած արժեթուղթը թույլատրվում է բորսայական առևտրին սույն գլխի 5) կետով սահմանված վճարների կատարումը հավաստիացնող փաստաթղթի ստանալու օրվանից ոչ շուտ քան հաջորդ առևտրային օրը։

## **Գլուխ 10. Որոշման վիճարկումը**

- 1) Եթե Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը չի բավարարում Հայտը սույն կանոնների 6 գլխի 1) կետում նշված ժամանակահատվածում, թողարկողը իրավունք ունի վիճարկել Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի որոշումը դատական կարգով:

## **Գլուխ 11. Արժեթղթերի ցուցակման և/կամ առևտրին թույլտվության պայմանագիր**

- 1) Արժեթղթերի ցուցակման որոշումը կայացնելուց հինգ առևտրային օրվա ընթացքում թողարկողը պարտավոր է Բորսայի հետ կնքել արժեթղթերի ցուցակման և/կամ առևտրին թույլտվության վերաբերյալ գրավոր պայմանագիր, որն այլ կետերի հետ մեկտեղ պետք է սահմանի նաև թողարկողի պարտականությունը՝ պահպանելու Բորսայի կանոնների բոլոր դրույթները:
- 2) Պայմանագիրը պետք է կազմված լինի ԱՅ-1.1 ձևին համապատասխան:
- 3) Թողարկողի արժեթուղթը չի թույլատրվում բորսայական առևտրին, եթե սույն գլխի 1) կետում նշված պայմանագիրը կնքված չէ:

## **Գլուխ 12. Ցուցակման հայտ**

- 1) Բորսայի կողմից արժեթղթի ցուցակումը և/կամ առևտրին թույլտվությունը իրականացվում է թողարկողի կողմից ԱՅ-1.2 ձևին համապատասխան Հայտի ներկայացման հիման վրա:
- 2) Հայտում պետք է ներառված լինեն թողարկված կամ թողարկմանը ենթակա, բայց դեռ չցուցակված կամ առևտրին թույլ չտրված նույն դասի կամ նույն իրավունքները հավաստող բոլոր արժեթղթերի մասին տեղեկությունները:
- 3) Հայտը և Հայտին կից փաստաթղթերը (դրա լրացումները) թողարկողի կողմից Բորսա են ներկայացվում.
  - ա) մեկ օրինակից՝ թղթային կրիչով, և
  - բ) էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային փոստի միջոցով դրանք ուղարկելով Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի կողմից սահմանված էլեկտրոնային փոստի հասցեին՝ ստացման մասին հետադարձ ծանուցման ռեժիմով:
- 4) Եթե թողարկողը Հայտին կից չի ներկայացնում Բորսայի «Սակագների մասին» կանոններով սահմանված վճարի կատարումը հավաստիացնող փաստաթուղթը, ապա Հայտը համարվում է Բորսային ներկայացված ցուցակման վճարի կատարումը հավաստիացնող փաստաթղթի ստանալու օրվանից ոչ շուտ քան հինգերորդ աշխատանքային օրը:
- 5) Եթե թողարկողը Հայտը ներկայացնում է միայն թղթային կրիչով կամ էլեկտրոնային եղանակով, ապա Հայտը համարվում Բորսային ներկայացված այն ամբողջական ստանալու օրվանից ոչ շուտ քան հինգերորդ աշխատանքային օրը:
- 6) Հայտը (դրա լրացումները) պետք է կազմված և հաստատված լինի Օրենքով և սույն Կանոններով սահմանված պահանջներին համապատասխան
- 7) Հայտին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.
  - ա) Կենտրոնական բանկի պահանջները բավարարող առևտրային ազդագիրը՝ արժեթղթերի թույլտվությունը կարգավորվող շուկայում.
  - բ) Կենտրոնական բանկի արժեթղթերի գրանցման մասին որոշման պատճենը.
  - գ) Կենտրոնական բանկի կողմից տրված արժեթղթերի ցուցակման մասին թույլտվությունը.
  - դ) տեղեկանք առ այն, որ Հայտի ներկայացման պահին ցուցակման ենթակա արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը վարում է Օրենքով նախատեսված մարմնի կողմից:
  - ե) տեղեկանք Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շնորհված արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի մասին.
  - զ) Հայտի ներկայացման տարվա եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները՝ կազմված նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, եթե բացակայում են առևտրային ազդագրում.
  - է) տեղեկատվություն Շուկա ստեղծողի և վերջինիս հետ կնքված պայմանագրի հիմնական պայմանների վերաբերյալ, մասնավորապես՝ նշելով թողարկողի արժեթղթերի գնման և վաճառքի հայտերի նկատմամբ պահանջները (պայմանագրի առկայության դեպքում).

- ը) Բորսայի կանոնների դրույթների և պահանջների կատարման վերաբերյալ հաստատում, որը ստորագրվում և ներկայացվում է Բորսայի կողմից սահմանված ձևին համապատասխան, եթե այն նախապես չի ներկայացվել Բորսա.
  - թ) Հայտի ներկայացման մասին որոշում կայացրած թողարկողի համապատասխան իրավասու մարմնի արձանագրության քաղվածքը.
  - ժ) արժեթղթերի ցուցակման ընթացքում կամ, եթե մինչև Հայտի ներկայացումը տեղի է ունեցել բաժնետիրական կապիտալի ավելացում և այն Հայտի ներկայացման պահին դեռ չի գրանցվել, բաժնետերերի ընդամուր ժողովի կամ թողարկողի իրավասու մարմնի կողմից ընդունված բաժնետիրական կապիտալի ավելացման վերաբերյալ որոշման պատճեն.
  - ժա) սույն կանոններով սահմանված ժամանակաշրջանին վերաբերվող տարեկան հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունները, եթե նրանք նախապես չեն ներկայացվել Բորսա.
  - ժբ) այլ փաստաթղթեր (թողարկողի հայեցողությամբ):
- 8) Պարտքային արժեթղթերի ցուցակման դեպքում թողարկողը սույն գլխի 7-րդ մասում սահմանված փաստաթղթերից բացի Հայտին կից նաև պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.
- ա) պարտքային արժեթղթերի մարման վճարումների և տոկոսային վճարումների կատարման ժամանակացույց.
  - բ) պարտքային արժեթղթերի թողարկման տեղաբաշխողի և թողարկողի միջև կնքած ցանկացած պայմանագրեր կամ այլ համաձայնագրեր (եթե թողարկողի պարտքային արժեթղթերի տեղաբաշխումը իրականացվել է այլ անձի կողմից):
- 9) Սույն կանոնների 3-րդ գլխի 2-րդ մասում թվարկված սուբյեկտները Հայտին կից ներկայացնում են սույն գլխի 7-րդ մասում նշված փաստաթղթերը բացառությամբ ե), գ), թ) և ժա) կետերում նշվածներից:
- 10) Եթե թողարկողը Հայտը ներկայացնում է Բորսա առաջին անգամ, ապա թողարկողը սույն գլխի 7-րդ մասով սահմանված փաստաթղթերից բացի Հայտին կից նաև պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.
- ա) թողարկողի տնտեսական գործունեության և պլանավորված տնտեսական արդյունքների նկարագրությունը ընթացիկ և հաջորդող ֆինանսական տարվա համար.
  - բ) Բորսայի կողմից սահմանված ձևին համապատասխան թողարկողի գրավոր համաձայնությունը այն մասին, որ Բորսան իրավունք ունի ստանալու տեղեկատվություն անմիջապես թողարկողի գործունեության վերահսկումը իրականացնող մարմիններից՝ ինչպես ցուցակման գործընթացի ժամանակ, այնպես էլ արժեթղթերի Բորսայում ցուցակման մեջ գտնվելու ողջ ժամանակահատվածում.
  - գ) թողարկողի կողմից գրավոր հաստատումը, որ թողարկողի տնտեսական գործունեությունից բխող բոլոր գործարքները թողարկողի մայր-ընկերության կամ նրա կողմից վերահսկող ընկերությունների հետ կնքվում են տնտեսական համընդանուր սկզբունքներից ելնելով.
  - դ) թողարկողի մայր-ընկերության կողմից գրավոր հաստատումը, որ այն հետևելու է Բորսայի կանոնների դրույթերին: Եթե թողարկողի մայր-ընկերությունը իր հերթին պատկանում է որևէ խմբին, ապա այդ խմբի գլխավոր ընկերության Բորսայի կանոնների դրույթերի հետևելու մասին համաձայնությունը ևս ներկայացվում է.
  - ե) նախորդ 3 (երեք) տարվա ընթացքում թողարկողի կողմից թողարկված հրապարակային թողարկման ազդագրերը:
- 11) Ներդրողների շահերի պաշտպանության անհրաժեշտությունից ելնելով՝ Բորսայի ցուցակող մարմինը կարող է լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկատվություն պահանջել թողարկողից:
- 12) Բորսան իրավասու է արժեթղթերը որոշակի Բորսայական ցուցակում ընդգրկելու հայտ ներկայացրած թողարկողից պահանջել համապատասխան պայմանագիր կնքել Շուկա ստեղծողի հետ:
- 13) Բորսան Հայտը ներկայացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հանձնարարությամբ հայտը տրամադրում է աշխատանքային խմբին, որը մինչև հաջորդող աշխատանքային օրվա ավարտը գրավոր հանձնարարությամբ Հայտը տրամադրում է Իրավասու ստորաբաժանմանը:

14) Իրավասու ստորաբաժանումը Հայտի ստացման պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքային խմբին է ներկայացնում հայտի սույն կանոններին բավարարման կամ մերժման վերաբերյալ գրավոր ամփոփ եզրակացություն: Եթե մինչև վերջինիս ներկայացնելը Բորսան ստանում է Հայտի որևէ լրացում, ապա այն համարվում է հայտի անբաժանելի մաս և դրա համապատասխանության ստուգման արդյունքները ներառվում են հայտի սույն կանոններին բավարարման կամ մերժման վերաբերյալ գրավոր ամփոփ եզրակացությունում:

### **Գլուխ 13. Բացառություններ Հայտի հետ ներկայացվող փաստաթղթերին**

- 1) Առանձին դեպքերում Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը, դիտորդ խորհրդի կողմից համապատասխան հավանություն (թույլտվություն) ստանալու դեպքում, իրավունք ունի որոշելու, որ սույն կանոնների 12-րդ գլխով սահմանված որոշ փաստաթղթեր անհրաժեշտ չեն ցուցակման և առևտրին թույլտվության որոշում կայացնելու համար, որոնք թողարկողը կարող է չներկայացնել:
- 2) Թողարկողների կողմից Բորսայի կարգավորվող շուկա ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկատվությունը հրապարակվում են հայերեն: Սահմանված պահանջը չի սահմանափակում նշված փաստաթղթերի և տեղեկատվության կազմումը և հրապարակումը հայերենի հետ մեկտեղ այլ լեզուներով: Եթե տարբեր լեզուներով հրապարակված փաստաթղթերի միջև առկա է իմաստային անհամապատասխանություն, կամ դրանք կարող են մեկնաբանվել տարբեր իմաստներով, ապա գերակայում է հայերեն լեզվով հրապարակված փաստաթուղթը:

### **Գլուխ 14. Հավելյալ տեղեկություն ստանալու իրավունք**

- 1) Ի լրումն սույն կանոններով սահմանված տեղեկությունների և փաստաթղթերի, Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը իրավունք ունի ցուցակմանը դիմող թողարկողից պահանջել նաև այլ տեղեկություն և փաստաթղթեր, որոնց ներկայացումը Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինն անհրաժեշտ կհամարի՝ արժեթղթերի ցուցակման որոշում կայացնելու համար: Բորսան իրավունք ունի իր Տեղեկատվական համակարգով հրապարակել նաև սույն հոդվածով ստացված տեղեկությունները:
- 2) Բորսան իրավունք ունի թողարկողից պահանջել տեղեկություն վերջինիս գործունեության իրականացման հասցեների, վայրերի մասին, ինչպես նաև թողարկողի այն սեփականատերերի մասին, որոնց պատկանում է թողարկողի բաժնային արժեթղթերի 5% (հինգ տոկոսը) և ավելին, ինչպես նաև վերջիններիս լիազոր ներկայացուցիչների մասին:

### **Գլուխ 15. Արժեթղթի առևտրի ազդագիր**

- 1) Ի լրումն թողարկողի կողմից ներկայացված այլ փաստաթղթերի և տեղեկատվությանը Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը՝ ցուցակման որոշումը կայացնելիս կամ Հայտը մերժելիս պետք է հիմնվի թողարկողի գրանցված արժեթղթերի առևտրի ազդագրի վրա:
- 2) Արժեթղթի առևտրի ազդագիրը Բարսա է ներկայացվում թղթային և էլեկտրոնային (էլեկտրոնային փոստի կամ մագնիսական կրիչի) եղանակով:
- 3) Արժեթղթի առևտրի ազդագիրը պետք է համապատասխանի Օրենքով սահմանված պահանջներին:
- 4) Բորսան իրավունք ունի Բորսայի արժեթղթերի ցուցակմանը դիմող թողարկողից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն առևտրի ազդագրում ներկայացված տեղեկությունների մասին և հրապարակել այդ տեղեկատվությունը Բորսայի տեղեկատվական հրապարակման համակարգի միջոցով: Բորսայի կողմից պահանջվող լրացուցիչ տեղեկատվության ներկայացումը պարտադիր է թողարկողի համար:
- 5) Եթե թողարկողը գտնում է, որ Բորսայի կողմից պահանջված լրացուցիչ տեղեկության հրապարակումը կարող է զգալիորեն վնասել իր շահերը, նա իրավունք ունի Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնին պահանջվող տեղեկության հետ ներկայացնել գրավոր դիմում՝ համապատասխան տեղեկատվությունը չբացահայտելու վերաբերյալ:
- 6) Բորսայում արժեթղթերը ցուցակող մարմինը իրավունք ունի բավարարել սույն գլխի 5)-րդ կետով ներկայացված թողարկողի համապատասխան դիմումը, եթե այդ տեղեկատվությունը Բորսայում

արժեթղթերը ցուցակող մարմնի կողմից չի համարվում էական ներդրումային որոշումներ կատարելու և/կամ առևտրի ազդագրում ընդգրկված տեղեկատվության խեղաթյուրման համար:

- 7) Առևտրի ազդագիրը պետք է հրապարակվի Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի կողմից ցուցակման որոշում կայացնելու երրորդ առևտրային օրը, բայց ոչ ուշ քան արժեթղթերի առաջին ցուցակման նախորդող օրը, եթե այլ բան սահմանված չէ Օրենքով:
- 8) Առանց Օրենքի պահանջները բավարարող առևտրի ազդագրի հրապարակման՝ արժեթղթերի թույլտվությունը կարգավորող շուկայում առևտրին արգելվում է:
- 9) Կենտրոնական բանկի կողմից չգրանցված առևտրի ազդագրի հրապարակումը արգելված է:
- 10) Լրացուցիչ ցուցակման որոշման համար դիմող թողարկողի արժեթղթերը ցուցակելիս, Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը կարող է բացառություններ անել ցուցակմանը ներկայացված փաստաթղթերի նկատմամբ սահմանված պահանջներում, ներառյալ առևտրի ազդագիրը ներկայացման պահանջը, եթե Օրենքով այլ բան սահմանված չէ:

### **Գլուխ 16. Արժեթղթի ցուցակման պահպանումը**

- 1) Ցուցակման որևէ ցուցակում արժեթղթի ցուցակման պահպանման համար տվյալ թողարկողը պարտավոր է.
  - ա) Օրենքով և Բորսայի կանոններով սահմանված ձևով, կարգով և ժամկետներում Բորսա ներկայացնել իր գործունեության վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան հաշվետվությունները, միջանկյալ հաշվետվությունները և բացահայտված էական տեղեկությունների փոփոխությունները.
  - բ) Բորսա ներկայացնել լուծարման կամ անվճարունակության մասին որոշման պատճենը՝ ընդունման պահից անհապաղ.
  - գ) Բորսա ներկայացնել սնանկ ճանաչելու կամ լուծարման մասին դատարանի վճռի պատճենը՝ մման որոշման կայացման պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում.
  - դ) տվյալ դասի արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացնել Օրենքով սահմանված մարմնի միջոցով.
  - ե) սահմանված ժամկետներում կատարել ցուցակման տվյալ ցուցակում ցուցակման պահպանման համար սահմանված պարտադիր վճարը.
  - զ) պահպանել Օրենքով և Բորսայի կանոններով կարգավորվող շուկայում հրապարակայնորեն վաճառվող արժեթղթի նկատմամբ սահմանված այլ պահանջները.
  - է) ցանկացած անձի պահանջով վերջինիս տրամադրել սահմանված հաշվետվությունները և բացահայտված էական փաստերի և տեղեկությունների փոփոխությունները՝ գանձելով միայն պատճենահանման ծախսերը:
- 2) Սույն գլխի 1) կետի ա) ենթակետով սահմանված հաշվետվությունները և բացահայտված էական տեղեկությունների փոփոխությունները թողարկողների կողմից Բորսա են ներկայացվում.
  - ա) մեկ օրինակից թղթային կրիչով, և
  - բ) էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկելով Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի կողմից սահմանված էլեկտրոնային փոստի հասցեին՝ ստացման մասին հետադարձ ծանուցման ռեժիմով, կամ կից գրությամբ մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով առձեռն հանձնելով Բորսա:
  - գ) Թողարկողը իրավունք ունի սույն կետով նշված հաշվետվությունները և տեղեկությունները ՍիԲի Էյ Նեթ ցանցի միջոցով ներկայացնել Կենտրոնական Բանկ:
- 3) Հաշվետվությունները և բացահայտված էական տեղեկությունների փոփոխությունները ներկայացման օրվանից Բորսան իրավունք է ձեռք բերում դրանք հրապարակել իր Տեղեկատվական համակարգում:
- 4) Բորսայի «Մակագների մասին» կանոններով ցուցակման և/կամ առևտրին թույլտվության պահպանման համար սահմանված պարտադիր վճարի չափը հաշվարկվում է տվյալ արժեթղթի թողարկողի կողմից արժեթղթի ցուցակման մասին որոշման ուժի մեջ մտնելու ամսվա համար ամբողջությամբ մինչև տվյալ տարվա ավարտը:

- 5) Եթե թողարկողը սահմանված հաշվետվությունները ներկայացնում է միայն թղթային կրիչով կամ էլեկտրոնային եղանակով, ապա հաշվետվությունը համարվում է հորսային ներկայացված այն ամբողջությամբ ստանալու օրվանից:
- 6) Յուրակցական պահպանման համար սահմանվում է տարեկան պարտադիր վճար: Յուրաքանչյուր տարվա համար հաշվարկված գումարը թողարկողի կողմից վճարվում է մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 15-ը կամ հաջորդող առաջին աշխատանքային օրը:
- 7) Եթե արժեթուղթը որևէ պատճառով ապացուցակվում է, ապա ցուցակման պահպանման տարեկան պարտադիր վճարի որևէ մաս չի վերադարձվում թողարկողին:
- 8) Եթե ցուցակման պահպանման ընթացքում ցուցակման որևէ ցանկում ընդգրկված արժեթուղթը չի բավարարում ցուցակման տվյալ ցանկի նկատմամբ սույն կանոններով սահմանված որևէ պահանջին, ապա Իրավասու ստորաբաժանումը պարտավոր է տվյալ անհամապատասխանությունը բացահայտելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահել Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնին՝ ներկայացնելով համապատասխան եզրակացությունը:
- 9) Եթե արժեթուղթը պետք է ավելի ցածր ցուցակման ցուցակում ընդգրկվի, այս դեպքում Իրավասու ստորաբաժանման վերջնական եզրակացությունում պետք է մանրամասնորեն ներկայացված լինի տվյալ արժեթուղթն ավելի ցածր ցուցակման ցուցակում կամ ազատ շուկայում ընդգրկելու հիմնավորումը, և համապատասխան ցածր ցուցակման ցուցակում կամ ազատ շուկայում ընդգրկելու մասին որոշում ընդունելու առաջարկությունը:
- 10) Եթե արժեթուղթը պետք է ավելի բարձր ցուցակման ցուցակում ընդգրկվի, այս դեպքում Իրավասու ստորաբաժանման վերջնական եզրակացությունում պետք է մանրամասնորեն ներկայացված լինի տվյալ արժեթուղթն ավելի բարձր ցուցակման ցուցակում ընդգրկելու հիմնավորումը, և համապատասխան բարձր ցուցակման ցուցակում ընդգրկելու մասին որոշում ընդունելու առաջարկությունը:
- 11) Սույն գլխի 8-րդ մասում նշված տեղեկությունը ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը պարտավոր է համապատասխան որոշում ընդունել:
- 12) Եթե ցուցակման պահպանման ընթացքում Բորսայի ցուցակման որևէ ցուցակում ընդգրկված արժեթուղթը բավարարում է ավելի բարձր ցուցակման ցուցակի նկատմամբ սույն կանոններով սահմանված պահանջներին, ապա ցուցակման մարմինը պարտավոր է մեկ աշխատանքային օրվա ընթացքում տվյալ արժեթղթերի թողարկողին ծանուցում ուղարկել արժեթղթերն ավելի բարձր ցուցակման մակարդակում ընդգրկելու և ցուցակման ավելի բարձր մակարդակի համար սահմանված պահանջները, այդ թվում նաև՝ համապատասխան վճարումները կատարելու վերաբերյալ թողարկողի գրավոր համաձայնությունը ստանալու համար:
- 13) Յուրակցական մարմինը պարտավոր է սույն գլխի 12) կետով սահմանված համաձայնությունը ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում ավելի բարձր ցուցակման ցուցակում ընդգրկելու մասին որոշում ընդունել, եթե գրավոր չի առարկում տվյալ արժեթուղթն ավելի բարձր ցուցակման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:
- 14) Արժեթուղթն ավելի ցածր կամ բարձր ցուցակման ցուցակում կամ ազատ շուկայում ընդգրկելու վերաբերյալ որոշումն կազմվում է երկու բնօրինակից, որոնցից մեկ օրինակը մնում է Բորսայում, իսկ մյուսն որոշումն ընդունման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է թողարկողին:
- 15) Արժեթուղթն ավելի ցածր կամ բարձր ցուցակման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ցուցակման մարմնին այդ մասին տեղեկացնում է Բորսայի անդամներին:
- 16) Արժեթուղթն ավելի ցածր կամ բարձր ցուցակման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ է մտնում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքով սահմանված կարգով:

### **ԲԱԺԻՆ III. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՑՈՒՑԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

#### **Գլուխ 17. Թողարկողներին ներկայացվող պահանջները**

- 1) Հայտով Բորսա դիմող թողարկողի գործունեությունը պետք է կարգավորվի նրա գրանցման երկրի օրենսդրությամբ:
- 2) Բորսան իրավունք ունի չցուցակել թողարկողի արժեթղթերը, եթե նա գտնվում է լուծարման կամ սնանկության գործընթացներում, կամ եթե նա չմարված պարտավորություն ունի վերջին երկու տարիների ընթացքում:
- 3) Հայտով Բորսա դիմող թողարկողի տնտեսական, իրավական կամ այլ իրավիճակը չպետք է ռիսկի ենթարկի ներդրողների շահերի պաշտպանության և նրանց հանդեպ արդարության և հավասարության սկզբունքների իրագործմանը:
- 4) Հայտով Բորսա դիմող թողարկողի ղեկավար անձանց կազմը պետք է զգալի փոփոխությունների ենթարկված չլինի Հայտի ներկայացմանը նախորդող տասներկու ամսվա ընթացքում: Թողարկողի ղեկավարության կազմում փոփոխությունը համարվում է զգալի, եթե թողարկողի գործադիր մարմնի կամ խորհուրդի անդամների կեսից ավելին փոփոխվել են վերջին տասներկու ամիսների ընթացքում: Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը ունի սույն պահանջներից բացառություններ անելու իրավունք՝ միայն Դիտորդ խորհրդի կողմից համապատասխան հավանություն (թույլտվություն) ստանալու դեպքում:
- 5) Թողարկողը պարտավոր է հաստատել իր ղեկավար անձանց և աշխատակիցների գործունեությունը կարգավորող ներքին կանոնները և կանոնակարգերը:
- 6) Բորսան կարող է սահմանել թողարկողների կանոնների բովանդակության նկատմամբ մանրամասն պահանջներ:
- 7) Թողարկողը պարտավոր է բացահայտել տեղեկություններ իր ինտերնետային կայքում: Թողարկողը բացահայտում է տեղեկատվությունն առնվազն հայերեն լեզվով:
- 8) Բորսան թափանցիկությունն ապահովելու նպատակով իրավունք ունի պահանջելու թողարկողներից իրենց ինտերնետային կայքում, մասնաճյուղում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և Բորսայի կանոններով սահմանված ձևով, հաճախականությամբ և կարգով հրապարակել հաշվետվություններ և այլ տեղեկություններ, բացառությամբ առևտրային կամ այլ գաղտնիք կազմող կամ ծառայողական տեղեկությունների:
- 9) Բորսան կարող է իր կարգադրությամբ պարտավորացնել թողարկողին չհրապարակել համապատասխան տեղեկությունները, եթե Բորսայի կարծիքով այդպիսի տեղեկությունները արդարացված չէ ներդրողների շահերի պաշտպանության կամ թողարկողի ֆինանսական վիճակի տեսանկյունից:

#### **Գլուխ 18. Ցուցակմանը ներկայացված արժեթղթերին ներկայացվող պահանջները**

- 1) Ցուցակմանը ներկայացված արժեթղթերը՝ բացառությամբ այն ընկերությունների արժեթղթերի, որոնց համար կան ՀՀ օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներ, պետք է լինեն ազատ շրջանառվող՝ առանց որևէ սահմանափակումների: Վերջիններս գրավադրելու, տնօրինելու, օտարելու և կառավարելու իրավունքը չպետք է սահմանափակվի թողարկողի Կանոնադրությամբ:
- 2) Բորսայում ցուցակմանը ներկայացված արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարումը պետք է իրականացվի Կենտրոնական դեպոզիտարիայի կամ այլ մասնագիտացված կազմակերպության կողմից, որը Բորսայի կարծիքով կարող է ապահովել արժեթղթերի պատշաճ հաշվառում և արժեթղթերով գործարքներից բխող պարտավորությունների և վերջնահաշվարկի կատարում:
- 3) Ցուցակմանը ներկայացված արժեթղթերը պետք է համապատասխանեն և թողարկված լինեն դրանց թողարկման երկրի օրենսդրության դրույթերին և թողարկողի կանոնադրության դրույթերի համաձայն, եթե այլ բան սահմանված չէ Օրենքով:
- 4) Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի գնահատման համաձայն՝ ցուցակմանը ներկայացվող արժեթղթերի համար պետք է ստեղծվի ակտիվ երկրորդական շուկա, որը կապահովի արժեթղթի

գնի վստահելի ձևավորումը: Այս փաստը գնահատելիս պետք է նաև հաշվի առնվի Բորսայի որևէ անդամի հետ կնքած Շուկա ստեղծողի համաձայնագրի առկայությունը:

### **Գլուխ 19. Թողարկողի ֆինանսական հաշվետվությունները**

- 1) Հայտով Բորսա դիմող թողարկողի տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտորական ստուգման:
- 2) Հայտով Բորսա դիմող թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնելու իրավունք ունի թողարկողներին ստուգելու ոլորտում բավարար փորձ և մասնագիտական հմտություններ ունեցող անկախ և վստահելի աուդիտորական կազմակերպությունը: Դիտորդ խորհուրդն իր որոշմամբ կարող է սահմանել հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձին ներկայացվող այն չափանիշները, որոնց համապատասխանելու դեպքում ցանկալի է, որ ցուցակմանը դիմող թողարկողի տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթարկվեն աուդիտորական ստուգման այդ աուդիտն իրականացնող անձանց կողմից, եթե այլ բան սահմանված չէ Օրենքով:
- 3) Եթե Հայտով Բորսա դիմող թողարկողը հանդիսանում է որևէ խմբի ընկերություն, որի տիրապետման տակ են գտնվում խմբի մյուս ընկերությունների ձայնի իրավունք տվող բաժնեմասերի 50 և ավելի տոկոսը, ապա թողարկողը պետք է Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնին ներկայացնի այդ խմբի՝ սույն կանոններով սահմանված ժամանակահատվածի համար կոնսոլիդացված տարեկան հաշվետվությունները:
- 4) Հայտով Բորսա դիմող թողարկողի ֆինանսական հաշվետվությունները պետք է պատրաստված լինեն հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության դրույթներին համապատասխան և պարունակեն Բորսայի կանոններով սահմանված բոլոր տեղեկությունները:
- 5) Բորսային ներկայացվող հաշվետվական ձևերն են.
  - ա) էական փաստերի և տեղեկությունների հաշվետվություններ, որոնք Բորսա են ներկայացվում անհապաղ (բայց ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրվա ավարտը).
  - բ) եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ, որոնք Բորսա են ներկայացվում հաշվետու եռամսյակի ավարտից հետո քառասունհինգ օրվա ընթացքում: Հաշվետվություններ ներկայացվում են առաջին երեք եռամսյակների համար, չորրորդ եռամսյակի համար հաշվետվություն չի ներկայացվում.
  - գ) տարեկան հաշվետվություն, որը Բորսա է ներկայացվում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 30-ը ներառյալ (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների և ներդրումային ընկերությունների, որոնք ներկայացնում են Կենտրոնական բանկի կողմից սահմանված հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների համաձայն):
- 6) Եթե հաշվետվության ներկայացման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա այն ներկայացվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
- 7) Հաշվետվությունների տիտղոսաթերթերը, բովանդակությունները և համապատասխան կողավորումները կարգավորվում են Օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:
- 8) Թույլատրվում է եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները ներկայացնել միայն էլեկտրոնային փոստով կամ մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով:
- 9) Հաշվետվությունների թղթային կրիչով օրինակը կարվում և վավերացվում է թողարկողի կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ անձի կնիքով, լրացվում է տպագրական եղանակով և համարակալվում:
- 10) Հաշվետվություններում ներառվող այն տեղեկությունը, որը Կենտրոնական բանկի կողմից համարվում է գաղտնի, Բորսա չի ներկայացվում:

## **Գլուխ 20. Թողարկողի Կանոնադրությունը**

- 1) Թողարկողի կանոնադրությունը պետք է համապատասխանի գործող օրենսդրությանը և Բորսայի կանոնների պահանջներին: Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը իրավունք ունի թողարկողին տրամադրել հավելյալ ժամանակ իր կանոնադրությունը և ներքին կանոնները Բորսայի կանոններով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար, եթե ցուցակմանը ներկայացվող փաստաթղթերը թերի են:
- 2) Ցուցակվող արժեթղթերի փոխանցման իրավունքը չպետք է սահմանափակված լինի թողարկողի կանոնադրությամբ: Թողարկողի միևնույն դասի ցուցակվող արժեթղթերը պետք է ամբողջությամբ վճարված լինեն և դրանց սեփականատերերը պետք է ունենան միևնույն իրավունքները: Ցուցակվող արժեթղթերի թողարկողի տնտեսական և իրավական կարգավիճակները չպետք է վտանգեն ներդրողների շահերը:
- 3) Հայտով Բորսա դիմող թողարկողի կանոնադրությունը՝ նեռարյալ բոլոր փոփոխությունները և լրացումները, պետք է հասանելի լինի հասարակությանը, մասնավորապես, ազատ կերպով տրամադրվի թողարկողի գտնվելու վայրում, ինչպես նաև տեղադրված լինի թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում:
- 4) Հայտով Բորսա դիմող թողարկողը պարտավոր է իր կանոնադրությունը, ներառյալ բոլոր փոփոխությունները և լրացումները, ներկայացնել Բորսային թղթային և էլեկտրոնային եղանակով:

## **Գլուխ 21. Թողարկողի կանոնադրական կապիտալի ավելացումը**

- 1) Եթե արժեթղթերի լրացուցիչ թողարկման արդյունքում Բորսայում ցուցակված նույն դասի բաժնետոմսեր են թողարկվել, ապա թողարկողը պետք է դիմի Բորսա՝ այդ բաժնետոմսերի ցուցակման համար սույն կանոններով սահմանված կարգով: Թողարկողը պետք է նոր բաժնետոմսերի Հայտ ներկայացնի նոր թողարկված բաժնետոմսերը Օրենքով սահմանված մասնագիտացված պահառուի մոտ գնորդների հաշիվներին փոխանցման օրվանից ոչ ուշ:
- 2) Եթե որևէ անձ Բորսայում ցուցակված բաժնետոմսեր թողարկողի բաժնետիրական կապիտալում տիրապետում է բաժնետոմսերով ներկայացված քվեարկող ձայների ավելի քան 50%-ին (հիսուն տոկոս), և վերջինիս կողմից լրացուցիչ թողարկված բաժնետոմսերը ձեռք են բերվել զգալիորեն ավելի բարենպաստ գնով, քան բաժնետոմսերի շուկայական գինն է, ապա Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը իրավունք ունի չհաստատել Բորսայում թողարկողի արդեն իսկ ցուցակված բաժնետոմսերի դասին պատկանող նոր բաժնետոմսերի Հայտը: Քվեարկելու իրավունքը որոշվում է սույն ցուցակման կանոնների գլուխ 22-ի հիման վրա:
- 3) Սույն գլխի 2) կետում նշված նոր բաժնետոմսերի գինը համարվում է է շուկայական գնից զգալիորեն բարենպաստ, եթե նոր բաժնետոմսերի վաճառքի գինը առնվազն 10%-ով (տաս տոկոս) ցածր է նոր բաժնետոմսերի թողարկման որոշման օրվան նախորդող վերջին 10 (տաս) առևտրային օրերին գրանցված Բորսայում ցուցակված բաժնետոմսերի փակման գների միջին կշռվածից:

## **ԲԱԺԻՆ IV. ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ**

### **Գլուխ 22. Բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում բաժնետոմսերի ընդգրկման նկատմամբ պահանջներն ու չափանիշները**

- 1) Բաժնետոմսերի հիմնական ցուցակում (A) ընդգրկվում են այն բաժնային արժեթղթերը, որոնք (որոնց թողարկողը) բավարարում է հետևյալ չափանիշներին.
  - ա) տվյալ դասի բաժնային արժեթղթերի թողարկման Շուկայական կապիտալիզացիան, որը հաշվարկվում է թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը բազմապատկելով բաժնետոմսերի ցուցակման կամ առևտրին թույլատրման մասին որոշումը կայացնելուն նախորդող 10 (տաս) օրվա ընթացքում բաժնետոմսերի միջին կշռված գնով (եթե վերջինս անհնար է գնահատել, ապա թողարկողի Սեփական կապիտալի մեծությունը՝ առնվազն 1,000,000,000.0 (մեկ միլիարդ) Հայաստանի Հանրապետության դրամ: Եթե ներդրողները

ցուցաբերում են բավարար չափով հետաքրքրություն Բորսայում թողարկողի բաժնետոմսերով առևտուր իրականացնելու նկատմամբ, ապա Բորսայում արժեթղթերը ցուցակող մարմինը կարող է վերոնշյալ պահանջից բացառություն անել՝ միայն դիտորդ խորհրդի կողմից համապատասխան հավանություն(թույլտվություն) ստանալու դեպքում. Բորսայի կողմից թողարկողի Սեփական կապիտալի պահանջի համապատասխանության ստուգումն իրականացվում է Բորսայում առկա՝ տվյալ թողարկողի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

- բ) թողարկողի կողմից իրականացված գործունեության նվազագույն ժամկետը՝ 3 տարի: Հաշվի առնելով թողարկողի ֆինանսական վիճակը, շուկայում գրադեցրած դիրքը, գործունեության ոլորտը, հեղինակությունը, ապագայի հեռանկարները և թողարկողին ու նրա գործունեությունը գնահատելու համար կարևոր այլ գործոնները, Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը կարող է վերոնշյալ պահանջից բացառություն անել՝ միայն դիտորդ խորհրդի համապատասխան հավանությունը (թույլտվությունը) ստանալու դեպքում.
  - գ) թողարկողի գործունեության վերջին 3 տարիների ֆինանսական հաշվետվությունները հաստատված են անկախ աուդիտորի կողմից և ավարտված են գուտ շահույթի դրական մեծությամբ: Այն դեպքերում, երբ թողարկողը չի գործել 3 տարի, սակայն ներդրողներին հասանելի է տվյալ արժեթղթերի մասին այն ամբողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է բաժնետոմսերում ներդրումներ կատարելու համար ողջամիտ որոշման կայացման համար, ապա Բորսայում արժեթղթերը ցուցակող մարմինը կարող է վերոնշյալ պահանջից բացառություն անել՝ միայն դիտորդ խորհրդի համապատասխան հավանությունը (թույլտվությունը) ստանալու դեպքում.
  - դ) թողարկողի տվյալ դասի արժեթղթերի գրանցված սեփականատերերի նվազագույն քանակը՝ 100 սեփականատեր: Բորսան կարող է բացառություն անել վերոնշյալ պահանջից, եթե ենթադրվում է, որ ցուցակման ներկայացված բաժնային արժեթղթերի շուկան լինելու է բավականին իրացվելի և ցուցակման ենթակա բաժնային արժեթղթերի քանակը կազմում է առնվազն 10,000,0 (տասը հազար) միավոր.
  - ե) բաժնետոմսերի ազատ շրջանառող մասը (հանրությանը պատկանող)՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 15%: Բաժնետոմսերը չեն համարվում հանրությանը պատկանող, եթե նրանք կամ նրանցով ներկայացված քվեները պատկանում են թողարկողի կամ նրա դուստր կազմակերպության ղեկավարությանը կամ կառավարման մարմնի որևէ անդամին, կամ անդամի հետ փոխկապակցված որևէ անձին, ինչպես նաև եթե ցուցակմանը ենթակա բաժնետոմսերով ներկայացված բաժնետիրական կապիտալի 5% (հինգ տոկոսը) և ավելին հանդիսանում է մի անձի սեփականություն: Միևնույն ժամանակ, նույն դասի բաժնային արժեթղթերի մեծաքանակ թողարկումների դեպքում և հաշվի առնելով դրանց՝ հրապարակայնորեն տեղաբաշխված լինելու աստիճանը կամ այն ենթադրությունը, որ կարճ ժամկետում բաժնետոմսերի անհրաժեշտ քանակություն հրապարակայնորեն կտեղաբաշխվի, Բորսայում արժեթղթերը ցուցակող մարմինը կարող է վերոնշյալ պահանջից բացառություն անել՝ միայն դիտորդ խորհրդի համապատասխան հավանությունը (թույլտվությունը) ստանալու դեպքում.
  - զ) թողարկողը ներկայացրել է տվյալ ցուցակում բաժնետոմսերն ընդգրկելու վերաբերյալ իր գրավոր համաձայնությունը:
- 2) Եթե նույն դասի բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում է կատարվում, ապա դրանք հիմնական ցուցակում ընդգրկելու որոշում կայացնելիս Բորսան կարող է գնահատել արդյոք բաժնետոմսերի բավարար մակարդակ հրապարակայնորեն է տեղաբաշխվել՝ հաշվի առնելով ոչ միայն տվյալ թողարկումը, այլ նաև՝ բոլոր թողարկված բաժնետոմսերը:
- 3) Բաժնետոմսերի հիմնական ցուցակում բաժնետոմսերն ընդգրկելու Հայտը պետք է ներառի թողարկված միևնույն դասի բոլոր բաժնետոմսերը: Սույն կետում նշված պայմանը չի կիրառվում այն դեպքերում, երբ թողարկողի նկատմամբ հսկողությունը պահպանելու նպատակով կամ արժեթղթերի շրջանառությունը որոշակի ժամկետով սահմանափակող պայմանագրերի պատճառով բաժնետոմսերի հիմնական ցուցակում բաժնային արժեթղթերն ընդգրկելու համար ներկայացվում է տվյալ դասի բաժնային արժեթղթերի մի մասը: Բորսան սույն բացառությունը կատարում է այն դեպքում, երբ հանրությունը տեղյակ է վերոնշյալ դեպքերի մասին և տվյալ դասի

բաժնային արժեթղթերի մի մասի ընդգրկումը բաժնետոմսերի հիմնական ցուցակում չի վտանգում ներդրողների շահերը:

- 4) Ցուցակումից հետո ցուցակված արժեթղթերի համար Շուկայական կապիտալիզացիան հաշվարկվում է ցուցակված արժեթղթերի քանակը բազմապատկելով դրանց շուկայական արժեքով: Սույն կետի իմաստով որպես արժեթղթի շուկայական արժեք է ընդունվում նախորդ եռամսյակի առևտրային բոլոր օրերի համար այդ բաժնետոմսերի փակման գների միջին քվարանականը՝ կշռված բաժնետոմսերի քանակով:

### **Գլուխ 23. Պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում պարտատոմսերի ընդգրկման նկատմամբ պահանջներն ու չափանիշները**

- 1) Պարտատոմսերի հիմնական ցուցակում (Abond) ընդգրկվում են այն Կորպորատիվ պարտատոմսերը, որոնք (որոնց թողարկողը) բավարարում են հետևյալ չափանիշներին.
  - ա) թողարկողի կողմից իրականացված գործունեության նվազագույն ժամկետը՝ 3 տարի, որից վերջին երկու տարիների ընթացքում, թողարկողը պետք է իրականացնի իր հիմնական գործունեությունը: Հաշվի առնելով թողարկողի ֆինանսական վիճակը, շուկայում զբաղեցրած դիրքը, գործունեության ոլորտը, հեղինակությունը, ապագայի հեռանկարերը և և թողարկողին ու նրա գործունեությունը գնահատելու համար կարևոր այլ գործոններ, , Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը կարող է վերոնշյալ պահանջից բացառություն անել՝ միայն դիտորդ խորհրդի համապատասխան հավանությունը (թույլտվությունը) ստանալու դեպքում.
  - բ) թողարկողի տվյալ դասի պարտատոմսերի թողարկվող (թողարկված) ծավալի մեծությունը՝ առնվազն 500,000,000.0 (հինգ հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ (սույն պահանջը չի կիրառվում պարտատոմսերի Շարունակական թողարկումների դեպքում, երբ ընդհանուր թողարկման ծավալը որոշված չէ).
  - գ) թողարկողի վերջին երկու տարիների ֆինանսական հաշվետվությունները հաստատված են անկախ աուդիտորի կողմից: Այն դեպքերում, երբ թողարկողը չի գործել 2 տարի, սակայն ներդրողներին հասանելի է տվյալ արժեթղթերի մասին այն ամբողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է պարտատոմսերում ներդրումներ կատարելու համար ողջամիտ որոշման կայացման համար՝ Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը կարող է վերոնշյալ պահանջից բացառություն անել՝ միայն դիտորդ խորհրդի համապատասխան հավանությունը (թույլտվությունը) ստանալու դեպքում.
  - դ) թողարկողը ներկայացրել է տվյալ Բորսական ցուցակում ընդգրկելու վերաբերյալ իր գրավոր համաձայնությունը:
- 2) Ցուցակմանը ներկայացրած պարտքային արժեթղթերի անվանական արժեքը սահմանվում է Հայաստանի Հանրապետության արժույթով:
- 3) Բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերը ցուցակվում են պարտատոմսերի հիմնական ցուցակում միայն այն դեպքում, եթե բաժնային արժեթղթերը, որոնց փոխարկվում են պարտատոմսերը ընդգրկված են Բորսայի բաժնետոմսերի հիմնական ցուցակում:
- 4) Պարտատոմսերը հիմնական (Abond) ցուցակում ընդգրկելու Հայտը պետք է ներառի միևնույն դասի թողարկված բոլոր պարտատոմսերը:

## **ԲԱԺԻՆ V. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ**

### **Գլուխ 24. Բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում բաժնետոմսերի ընդգրկման նկատմամբ պահանջներն ու չափանիշները**

- 1) Բաժնետոմսերի երկրորդային ցուցակում (B) ընդգրկվում են այն բաժնային արժեթղթերը, որոնք կամ որոնց թողարկողը բավարարում է հետևյալ չափանիշներին.
  - ա) տվյալ դասի բաժնային արժեթղթերի Շուկայական կապիտալիզացիան, որը հաշվարկվում է թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը բազմապատկելով բաժնետոմսերի ցուցակման

կամ առևտրին թույլատրման մասին որոշումը կայացնելուն նախորդող 10 (տաս) օրվա ընթացքում բաժնետոմսերի միջին կշռված գնով (եթե վերջինս անհնար է գնահատել, ապա թողարկողի Սեփական կապիտալի մեծությունը)՝ առնվազն 500,000,000.0 (հինգ հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ: Եթե ներդրողները ցուցաբերում են բավարար չափով հետաքրքրություն Բորսայում թողարկողի բաժնետոմսերով առևտուր իրականացնելու նկատմամբ, ապա Բորսան կարող է վերոնշյալ պահանջից բացառություն անել. Բորսայի կողմից թողարկողի Սեփական կապիտալի պահանջի համապատասխանության ստուգումն իրականացվում է Բորսայում առկա՝ տվյալ թողարկողի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

- բ) թողարկողի կողմից իրականացված գործունեության նվազագույն ժամկետը՝ 3 տարի: Հաշվի առնելով թողարկողի ֆինանսական վիճակը, շուկայում զբաղեցրած դիրքը, գործունեության ոլորտը, հեղինակությունը, ապագա հեռանկարները և թողարկողին ու նրա գործունեությունը գնահատելու համար կարևոր այլ գործոններ, Բորսան կարող է վերոնշյալ պահանջից բացառություն անել.
  - գ) Թողարկողի գործունեության վերջին 3 տարիների ֆինանսական հաշվետվությունները հաստատված են անկախ աուդիտորի կողմից: Այն դեպքերում, երբ թողարկողը չի գործել 3 տարի, Բորսան կարող է վերոնշյալ պահանջից բացառություն անել այն պայմանով, որ ներդրողներին հասանելի է տվյալ արժեթղթերի մասին այն ամբողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է բաժնետոմսերում ներդրումներ կատարելու համար ողջամիտ որոշման կայացման համար.
  - դ) բաժնետոմսերի ազատ շրջանառող մասը (հանրությանը պատկանող)՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10%: Բաժնետոմսերը չեն համարվում հանրությանը պատկանող, եթե նրանք կամ նրանցով ներկայացված քվեները պատկանում են թողարկողի կամ նրա դուստր կազմակերպության ղեկավարությանը կամ կառավարման մարմնի որևէ անդամին, կամ անդամի հետ փոխկապակցված որևէ անձին, ինչպես նաև եթե ցուցակմանը ենթակա բաժնետոմսերով ներկայացված բաժնետիրական կապիտալի 5% (հինգ տոկոսը) և ավելին հանդիսանում է մի անձի սեփականություն: Միևնույն ժամանակ, նույն դասի բաժնային արժեթղթերի մեծաքանակ թողարկումների դեպքում և հաշվի առնելով դրանց՝ հրապարակայնորեն տեղաբաշխված լինելու աստիճանը կամ այն ենթադրությունը, որ կարճ ժամկետում բաժնետոմսերի անհրաժեշտ քանակություն հրապարակայնորեն կտեղաբաշխվի, Բորսայում արժեթղթերը ցուցակող մարմինը կարող է վերոնշյալ պահանջից բացառություն անել՝ միայն դիտորդ խորհրդի համապատասխան հավանությունը (թույլտվությունը) ստանալու դեպքում.
  - ե) թողարկողը ներկայացրել է տվյալ ցուցակում բաժնետոմսերն ընդգրկելու վերաբերյալ իր գրավոր համաձայնությունը:
- 2) Եթե նույն դասի բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում է կատարվում, ապա դրանք երկրորդային ցուցակում ընդգրկելու որոշում կայացնելիս Բորսան կարող է գնահատել, արդյոք բաժնետոմսերի բավարար մակարդակ է հրապարակայնորեն տեղաբաշխվել՝ հաշվի առնելով ոչ միայն տվյալ թողարկումը, այլ նաև՝ բոլոր թողարկված բաժնետոմսերը:
  - 3) Բաժնետոմսերի երկրորդային ցուցակում բաժնետոմսերն ընդգրկելու հայտը պետք է ներառի թողարկված միևնույն դասի բոլոր բաժնետոմսերը: Սույն կետում նշված պայմանը չի կիրառվում այն դեպքերում, երբ թողարկողի նկատմամբ հսկողության պահպանելու նպատակով, ինչպես նաև արժեթղթերի շրջանառությունը որոշակի ժամկետով սահմանափակող պայմանագրերի պատճառով բաժնետոմսերի երկրորդային ցուցակում բաժնային արժեթղթերն ընդգրկելու համար ներկայացվում է տվյալ դասի բաժնային արժեթղթերի մի մասը: Բորսան սույն բացառությունը կատարում է այն դեպքում, երբ հանրությունը տեղյակ է վերոնշյալ դեպքերի մասին և տվյալ դասի բաժնային արժեթղթերի մի մասի ընդգրկումը բաժնետոմսերի երկրորդային ցուցակում չի վտանգում ներդրողների շահերը:
  - 4) Ցուցակումից հետո ցուցակված արժեթղթերի համար Շուկայական կապիտալիզացիան հաշվարկվում է ցուցակված արժեթղթերի քանակը բազմապատկելով դրանց շուկայական արժեքով: Սույն կետի իմաստով որպես արժեթղթի շուկայական արժեք է ընդունվում նախորդ

եռամսյակի առևտրային բոլոր օրերի համար այդ բաժնետոմսերի փակման գների միջին թվաբանականը՝ կշռված բաժնետոմսերի քանակով:

**Գլուխ 25. Պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում պարտատոմսերի ընդգրկման նկատմամբ պահանջներն ու չափանիշները**

- 1) Պարտատոմսերի երկրորդային ցուցակում (Bbond) ընդգրկվում են այն Կորպորատիվ պարտատոմսերը, որոնք (որոնց թողարկողը) բավարարում է հետևյալ չափանիշներին.
  - ա) թողարկողի կողմից իրականացված գործունեության նվազագույն ժամկետը՝ 2 տարի: Հաշվի առնելով թողարկողի ֆինանսական վիճակը, շուկայում ունեցած դիրքը, գործունեության ոլորտը, հեղինակությունը, ապագա հեռանկարները և այլ գործոններ, որոնք կարևոր են թողարկողին և նրա գործունեությունը գնահատելու համար, Բորսան կարող է վերոնշյալ պահանջից բացառություն անել.
  - բ) պարտատոմսերի թողարկման ընդհանուր անվանական արժեքը՝ առնվազն 250,000,000.0 (երկու հարյուր հիսուն միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ (սույն պահանջը չի կիրառվում պարտատոմսերի Շարունակական թողարկումների դեպքում, երբ թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը որոշված չէ ).
  - գ) թողարկողի գործունեության վերջին ֆինանսական տարին հաստատված է անկախ աուդիտորի կողմից: Այն դեպքերում, երբ թողարկողը չի գործել մեկ տարի, ապա Բորսան կարող է վերոնշյալ պահանջից բացառություն անել այն պայմանով, որ ներդրողներին հասանելի է տվյալ արժեթղթերի մասին այն ամբողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է պարտատոմսերում ներդրումներ կատարելու համար ողջամիտ որոշման կայացման համար.
  - դ) թողարկողը ներկայացրել է տվյալ ցուցակում պարտատոմսերն ընդգրկելու վերաբերյալ իր գրավոր համաձայնությունը:
- 2) Բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերը ընդգրկվում են պարտատոմսերի երկրորդային ցուցակում (Bbond), եթե բաժնային արժեթղթերը, որոնց փոխարկվում են պարտատոմսերը արդեն ընդգրկված են բաժնետոմսերի որևէ ցուցակում:
- 3) Պարտատոմսերը հիմնական (Abond) կամ երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկելու հայտը պետք է ներառի միևնույն դասի թողարկված բոլոր պարտատոմսերը:

**ԲԱԺԻՆ VI. ԱԶՍ ՇՈՒԿԱ**

**Գլուխ 26. Բաժնետոմսերի ազատ (C) շուկայում բաժնետոմսերի ընդգրկման նկատմամբ պահանջներն ու չափանիշները**

- 1) Ազատ շուկայում (C) ընդգրկվում են թողարկողների արժեթղթերը՝ առանց վերջիններիս նկատմամբ պահանջներ սահմանելու, միայն ապահովելով արժեթղթերի սեփականատերերի կողմից թողարկողի վերաբերյալ էական տեղեկատվության ստացման հնարավորությունը: Ազատ շուկայում չեն ընդգրկվում այն արժեթղթերը, որոնց թողարկողը ճանաչվել է անվճարունակ կամ գտնվում է լուծարման գործընթացում, այդ թվում՝ սնանկության հետևանքով:

**Գլուխ 27. Պարտատոմսերի ազատ (Cbond) շուկայում պարտատոմսերի ընդգրկման նկատմամբ պահանջներն ու չափանիշները**

- 1) Պարտատոմսերի ազատ շուկայում (Cbond) ընդգրկվում են այն Կորպորատիվ պարտատոմսերը, որոնք (որոնց թողարկողը) բավարարում են հետևյալ չափանիշներին.
  - ա) թողարկողի կողմից իրականացված գործունեության նվազագույն ժամկետը՝ մինչև 1 տարի.
  - բ) պարտատոմսերի թողարկման ընդհանուր անվանական արժեքը՝ մինչև 100,000,000.0 (մեկ հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ.
- 2) Պարտատոմսերի ազատ շուկայում (Cbond) ընդգրկվում են նաև դրամական շուկայի գործիքները մինչև մեկ տարի մարման ժամկետ ունեցող արժեթղթերը, այդ թվում՝ կարճաժամկետ պարտատոմսերը, բանկային վկայագրերը և կարճաժամկետ այլ պարտքային արժեթղթերը:

- 3) Պարտատոմսերի ազատ շուկայում (Cbond) չեն ընդգրկվում այն արժեթղթերը, որոնց թողարկողը ճանաչվել է անվճարունակ կամ գտնվում է լուծարման գործընթացում, այդ թվում՝ սնանկության հետևանքով:

## **ԲԱԺԻՆ VII. ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՆՔԱԿԱ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

### **Գլուխ 28. Թողարկողին «ղիտարկման ենթակա» կարգավիճակի շնորհումը**

- 1) Թողարկողին «ղիտարկման ենթակա» կարգավիճակի շնորհման նպատակն է՝ առևտրի մասնակիցների ուշադրությունը հրավիրել այն կարևոր հանգամանքների կամ փաստերի վրա, որոնք կապված են թողարկողի կամ նրա կողմից թողարկված արժեթղթերի հետ:
- 2) Թողարկողին «ղիտարկման ենթակա» կարգավիճակի շնորհվում է հետևյալ դեպքերում.
  - ա) գործունեության տեսակի փոփոխության, որը կարող է էական ազդեցություն ունենալ թողարկողի կամ նրա կողմից թողարկված արժեթղթերի վրա.
  - բ) թողարկողի վերակազմակերպման.
  - գ) թողարկողի կողմից սույն կանոններով սահմանված պահանջների չբավարարման կամ սույն կանոններով սահմանված պարտականությունների չկատարման.
  - դ) ինքնակամ լուծարման, դատարանի կողմից սնանկության վարույթի հարուցման.
  - ե) եթե թողարկողի տնտեսական կամ իրավական կարգավիճակը վտանգում է ներդրողների շահերը.
  - զ) արժեթղթերը ապացուցակելու թողարկողի դիմումի հիման վրա կամ Բորսայի կողմից սույն կանոններով սահմանված կարգով ապացուցակման գործընթաց սկսելիս.
  - է) թողարկողին «ղիտարկման ենթակա» կարգավիճակի շնորհելն անհրաժեշտ է ներդրողների շահերի պաշտպանության համար.
  - ը) թողարկողին «ղիտարկման ենթակա» կարգավիճակի շնորհելը պահանջվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից:
- 3) Այն բանից հետո, երբ Բորսան թողարկողին շնորհում է «ղիտարկման ենթակա» կարգավիճակ, Բորսայի Տեղեկատվական համակարգում թողարկողի անվանման և նրա արժեթղթերին կից հատուկ նշան է մուտքագրվում՝ առևտրի մասնակիցներին տեղեկացնելով թողարկողին «ղիտարկման ենթակա» կարգավիճակի շնորհման վերաբերյալ:
- 4) Թողարկողին «ղիտարկման ենթակա» կարգավիճակի շնորհումը հիմք չէ սույն կանոններով սահմանված պարտավորությունների չկատարման համար: Թողարկողը Բորսային տեղեկացնում է «ղիտարկման ենթակա» կարգավիճակի շնորհման համար հիմք հանդիսացած հանգամանքներում կատարված փոփոխությունների վերաբերյալ:
- 5) Բորսայի կողմից թողարկողին «ղիտարկման ենթակա» կարգավիճակի շնորհելու կամ այդ կարգավիճակը դադարեցնելու վերաբերյալ որոշումը պետք է անհապաղ տրամադրվի թողարկողին (էլեկտրոնային փոստով կամ ֆաքսով) և Կենտրոնական բանկին, ինչպես նաև տեղադրվի Բորսայի Տեղեկատվական համակարգում:

## **ԲԱԺԻՆ VIII. ԲՈՐՍԱՅԻՆ ՏՐԱՍԱԴՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

### **Գլուխ 29. Հայտին և հաշվետվություններին ներկայացվող պահանջները**

- 1) Հայտը պետք է ներառի սույն կանոններով սահմանված տեղեկությունները և կազմված լինի ԱՅ-1.2 ձևին համապատասխան:
- 2) Հայտին և հայտին կից ներկայացվող բոլոր փաստաթղթերին ներկայացվում են հետևյալ պահանջները.
  - ա) Հայտը և հայտին կից ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է լինեն հեշտ ընթեռնելի, գրական հայերենով և լրացված տպագրական եղանակով.

- բ) Հայտը և հայտին կից ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է կարված և վավերացված լինեն թողարկողի, կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ անձի կնիքով.
  - գ) Հայտին կից ներկայացվող բոլոր փաստաթղթերի թերթերը պետք է համարակալված լինեն.
  - դ) եթե անհնար է Հայտին կից ներկայացվող բոլոր փաստաթղթերում ներառվող որևէ փաստաթղթի բնօրինակի ներկայացումը, անհրաժեշտ է Հայտում ներառել այդ փաստաթղթի պատճենը՝ «Իսկականի հետ ճիշտ է» նշագրումով, ստորագրված և կնքված թողարկողի իրավասու անձի կողմից:
- 3) Որպես լրացում ներկայացվող Հայտը, իրեն կցված փաստաթղթերով (լրացումները) պետք է.
- ա) ներկայացվեն Հայտի ձևին, կառուցվածքին և ներկայացման պահանջներին համապատասխան.
  - բ) պարունակեն Հայտում ներառման ենթակա բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը (բացառությամբ նախկինում պատշաճ ներկայացված կից փաստաթղթերի):

## **ԲԱԺԻՆ IX. ԱՐԺԵԹՂԹԻ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՍԵՑՈՒՄ ԵՎ ԱՊԱՑՈՒՑԱԿՈՒՄ**

### **Գլուխ 30. Արժեթղթի առևտրի կասեցումը**

- 1) Եթե ցուցակման պահպանման ընթացքում բորսայական որևէ ցուցակում կամ ազատ շուկայում ընդգրկված որևէ արժեթղթի թողարկողը չի բավարարում սույն կանոններով սահմանված ցուցակման և/կամ առևտրին թույլտվության պահպանման որևէ պահանջին կամ չի ներկայացրել սույն կանոններով սահմանված հաշվետվությունները, կամ բացահայտված էական տեղեկությունների փոփոխությունները, կամ ներկայացված հաշվետվությունների և բացահայտված էական տեղեկությունների փոփոխությունների ստուգման ընթացքում հայտնաբերվել են անարժանահավատ տեղեկություններ, կամ առկա է սույն կանոններով սահմանված առևտրի կասեցման այլ հիմք, ապա Իրավասու ստորաբաժանումը պարտավոր է երկու աշխատանքային օրվա ընթացքում Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնին ներկայացնել արժեթղթի առևտրի կասեցման վերաբերյալ եզրակացություն՝ մանրամասն հիմնավորելով կասեցման հիմքերը:
- 2) Իրավասու ստորաբաժանումն սույն գլխի 1-ին կետով սահմանված եզրակացությունը ստանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում Բորսայի արժեթղթերը ցուցակող մարմինը պարտավոր է արժեթղթի առևտրի կասեցման մասին որոշում ընդունել:
- 3) Թողարկողը իրավունք ունի Բորսա ներկայացնել իր արժեթղթերի ժամանակավոր առևտրի կասեցման դիմում: Դիմումում պետք է պարունակի արժեթղթերի առևտրի կասեցման անհրաժեշտությունը հիմնավորող մանրամասն պատճառաբանումները, ինչպես նաև առևտրի կասեցման ակնկալվող տեվողությունը և ժամկետները: Թողարկողի կողմից արժեթղթերի առևտրի կասեցման դիմումը ընդունվում կամ մերժվում է Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի կողմից: Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի կողմից ընդունված դրական որոշման մեջ նշվում է առևտրի կասեցման ժամկետը, ինչպես նաև այն հիմքերը, որոնց հիման վրա կայացվել է որոշումը:
- 4) Արժեթղթի առևտրի կասեցման վերաբերյալ որոշումը կազմվում է երկու բնօրինակից, որոնցից մեկը մնում է Բորսայում, իսկ մյուսն որոշումն ընդունման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է թողարկողին:
- 5) Արժեթղթի կասեցումը վերացված է համարվում մինչև տվյալ կասեցման հիմքի վերացումը և այդ վերացումը հավաստիացնող փաստաթղթի Բորսա մուտքագրման հաջորդ աշխատանքային օրը:
- 6) Արժեթղթի առևտրի կասեցումը հիմք չէ թողարկողի կողմից արժեթղթի ցուցակման կամ ազատ շուկայում ընդգրկման պահպանման նկատմամբ սույն կանոններով սահմանված պահանջների չկատարման համար:
- 7) Սույն կանոններից բխող թողարկողի պարտականությունները շարունակում են գործել նաև թողարկողի արժեթղթերի առևտրի կասեցման ժամանակահատվածում: Այն թողարկողը, որի արժեթղթերով առևտուրը կասեցվել է, պարտավոր է առևտրի կասեցման ժամանակահատվածի ընթացքում շարունակաբար տեղեկացնել Բորսային առևտրի կասեցման հիմք հանդիսացող հանգամանքների գարգացման, փոփոխման և վերանայման հնարավորության վերաբերյալ:

- 8) Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը արժեթղթի առևտրի կասեցման, ինչպես նաև կասեցման վերացման վերաբերյալ որոշումների ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում պետք է դրանք հրապարակի իր Տեղեկատվական համակարգի միջոցով:
- 9) Արժեթղթի առևտրի կասեցման վերաբերյալ որոշումն ուժի մեջ է մտնում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

### **Գլուխ 31. Արժեթղթերի ապացուցակումը և առևտրի դադարեցումը**

- 1) Ցուցակված արժեթուղթը ապացուցակվում է և կարգավորվող շուկայում նրա առևտուրը դադարեցվում է, ինչպես նաև ազատ շուկայում ընդգրկված արժեթղթի առևտուրը դադարեցվում է, եթե.
  - ա) Օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից ուժը կորցրած է համարվել արժեթղթի գրանցումը.
  - բ) թողարկողը կամ վերջինիս կողմից թողարկված արժեթղթերը չեն բավարարում բորսայական այն ցուցակի կամ ազատ շուկայի պահանջներին, որում ընդգրկվել են.
  - գ) իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում կատարվել է թողարկողի դադարման կամ լուծարման մասին գրառումը.
  - դ) 90 օր տևողությամբ անընդհատ ժամանակահատվածի ընթացքում չի վերացվել տվյալ արժեթղթի առևտրի կասեցման հիմքը.
  - ե) լրացել է տվյալ արժեթղթի շրջանառության ժամկետը.
  - զ) տվյալ արժեթուղթը փոխարկվել է այլ դասի արժեթղթով.
  - է) թողարկողի կողմից որոշում է կայացվել ընկերության լուծարման վերաբերյալ կամ դատարանի կողմից հարուցվել է սնանկության վարույթ.
  - ը) արժեթղթերի սեփականատերերի թիվը այնքան փոքր է, որ շուկան չի կարողանա պատշաճ գործել.
  - թ) թողարկողի տնտեսական կամ իրավական կարգավիճակը կարող է վտանգել ներդրողների շահերը.
  - ժ) թողարկողի վերակազմակերպման դեպքում` բացառությամբ իրավաբանական անձանց միացմամբ իրականացվող վերակազմակերպման, երբ ցուցակված արժեթղթերը պահպանում են իրենց դասը:
  - ի) թողարկողի դիմումի հիման վրա:
- 2) Սույն գլխի 1-ին կետով սահմանված որևէ հիմքի առկայության դեպքում (բացառությամբ սույն գլխի 1) կետի ժ) ենակետով սահմանված հիմքի) Իրավասու ստորաբաժանումը պարտավոր է երկու աշխատանքային օրվա ընթացքում Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմին ներկայացնել արժեթղթի ապացուցակման և դրա առևտրի դադարեցման, կամ ազատ շուկայում առևտրի դադարեցման մասին եզրակացություն` մանրամասն հիմնավորելով ապացուցակման և/կամ առևտրի դադարեցման հիմքերը:
- 3) Իրավասու ստորաբաժանման սույն գլխի 2-րդ կետով սահմանված եզրակացությունը ստանալու պահից Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը հինգ աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է արժեթղթի ապացուցակման և/կամ առևտրի դադարեցման մասին որոշում ընդունել, եթե գրավոր չի առարկում Իրավասու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացությանը:
- 4) Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը իրավունք ունի մերժել արժեթղթերի ապացուցակումը և/կամ առևտրի դադարեցումը` թողարկողի կողմից սույն գլխի 1-ին կետի ի) ենակետով սահմանված դիմումի հիման վրա, եթե գտնում է, որ ապացուցակումը և/կամ առևտրի դադարեցումը կարող է էական ռիսկի ենթարկել ներդրողների շահերը կամ արժեթղթերի սեփականատերերի մի մասին անարդար առավելություններ կտա այլ սեփականատերերի նկատմամբ կամ հաշվին, կամ արժեթղթերի սեփականատերերի մի մասին անարդար կերպով շահույթի ստացման հնարավորություն կընձեռի այլ սեփականատերերի հաշվին:
- 5) Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը ապացուցակման և/կամ առևտրի դադարեցման դիմումի վերաբերյալ դրական կամ բացասական որոշում է ընդունում դիմումի ներկայացման օրվանից երեք ամսվա ընթացքում: Եթե Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը դիմումի քննարկման ընթացքում թողարկողից պահանջում է հավելյալ տեղեկություն, կամ եթե վերահսկման գործ է

սկսվել, կամ թողարկողին վերաբերվող այլ կարևոր գործընթացները դեռ ընթացքում են, Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը որոշումը կայացնում է բոլոր անհրաժեշտ հավելյալ տեղեկությունների ներկայացման կամ վերահսկման գործի ավարտից, կամ թողարկողի կողմից այլ կարեոր հանգամանքների մասին տեղեկատվության բացահայտումից հետո երեք ամսվա ընթացքում, բայց ոչ ուշ քան ապացուցակման և/կամ առևտրի դադարեցման դիմումի ստացման պահից վեց ամիս անց:

- 6) Եթե Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը որևէ որոշում չի կայացնում սույն գլխի 5) կետում սահմանված ժամկետում, ապա ապացուցակման և/կամ առևտրի դադարեցման դիմումը համարվում է մերժված:
- 7) Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը կարող է ապացուցակման և/կամ առևտրի դադարեցման դիմումի վերաբերյալ դրական կամ բացասական որոշում ընդունել միայն Դիտորդ խորհրդի համապատասխան հավանությունը (թույլտվությունը) ստանալու դեպքում:
- 8) Արժեթղթի ապացուցակման և/կամ առևտրի դադարեցման մասին որոշումը կազմվում է երկու բնօրինակից, որոնցից մեկը մնում է Բորսայում, իսկ մյուսն որոշումն ընդունման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է թողարկողին:
- 9) Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը արժեթղթի ապացուցակման և/կամ առևտրի դադարեցման վերաբերյալ որոշումների ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրանք պետք է հրապարակի իր Տեղեկատվական համակարգի միջոցով:
- 10) Արժեթղթի ապացուցակման և/կամ առևտրի դադարեցման մասին որոշումն ուժի մեջ է մտնում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
- 11) Եթե Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմինը չի բավարարում թողարկողի ապացուցակման և/կամ առևտրի դադարեցման դիմումը, կամ որոշում չի կայացնում սույն գլխի 5) կետում նշված ժամանակահատվածում, թողարկողը իրավունք ունի վիճարկել Բորսայի արժեթղթեր ցուցակող մարմնի որոշումը դատական կարգով:

## **ԲԱԺԻՆ X. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

### **Գլուխ 32. Կանոններն ուժի մեջ մտնելը և կիրառման առանձնահատկությունը**

- 1) Սույն կանոններն ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկում գրանցման պահից:
- 2) Մինչև սույն կանոնների ուժի մեջ մտնելը ցուցակված արժեթղթերը ընդգրկվում են սույն կանոնների 22-27 գլուխներով սահմանված ցուցակման ցուցակներում կամ ազատ շուկայում՝ սույն կանոնների ուժի մեջ մտնելու պահից 30 օրվա ընթացքում:

**Հաստատված է**  
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ**  
**դիտորդ խորհրդի թիվ 3 որոշմամբ**

\_\_\_\_\_ **Յոհան Ֆրեդիով**

**«13» հունիսի 2008թ.**  
**ք. Երևան**  
**ՀՖԲ-01/090Լ**

**Ձև ԱՑ-1.1**

(արժեթղթի ցուցակման և/կամ առևտրին թույլտվության պայմանագիր)

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ No \_\_\_\_\_**  
**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՑՈՒՑԱԿՄԱՆ ԵՎ/ԿԱՄ ԱՈՒՎՏՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ**

**ք. Երևան**

\_\_\_\_\_ (օր, ամիս, տարեթիվ)

\_\_\_\_\_ (այսուհետ՝ Թողարկող), ի դեմս \_\_\_\_\_, (թողարկողի անվանումը, կազմակերպական - իրավական ձևը) (պաշտոն և անուն, ազգանուն) որը գործում է Թողարկողի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ**» Բաց Բաժնետիրական Ընկերությունը, (այսուհետ՝ Բորսա), ի դեմս \_\_\_\_\_, (պաշտոն և անուն, ազգանուն) որը գործում է Բորսայի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿՄԱՆ**

1.1. Սույն պայմանագրով Բորսան ընդգրկում է Թողարկողի արժեթղթերը՝

արժեթղթերի դասը (տեսակը)	
արժեթղթերի քանակը	
արժեթղթերի ձևը	
անվանական արժեքը	

բորսայական ցուցակում կամ թույլատրում է Թողարկողի արժեթղթերը բորսայական առևտրին (այսուհետ՝ (ցնցել այն ծառայությունը, որը չի մատուցվելու, բողմելով միայն մատուցվող ծառայությունը)

Ծառայություններ), իսկ Թողարկողը պարտավորվում է վճարել Ծառայությունների համար:

1.2. Սույն պայմանագիրը կնքված է Բորսայի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլտվության կանոններ»-ի հիման վրա և սույն պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլտվության կանոններ»-ով, ինչպես նաև «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1. Բորսան պարտավոր է.

2.1.1. Ծառայությունների մատուցումը իրականացնել, ՀՀ կենտրոնական բանկում գրանցված Բորսայի կանոններով սահմանված ժամկետում և պայմաններով.

2.1.2. Թողարկողին տեղեկացնել Բորսայի այն կանոնների մեջ կատարվող փոփոխությունների և լրացումների մասին, որոնք վերաբերվում են սույն պայմանագրով մատուցվող Ծառայությունների մատուցման ժամկետներին, կարգին և զնին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում: Սույն կետի իմաստով պատշաճ տեղեկացում է համարվում համապատասխան տեղեկությունները Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում զետեղելը:

2.2. Թողարկողը պարտավոր է.

2.2.1. Մատուցվող Ծառայությունների համար Բորսային վճարել սույն պայմանագրի 3.1. կետում նշված գինը:

2.2.2. Ժամանակին Բորսային տեղյակ պահել սույն պայմանագրի կնքման համար ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում փոփոխությունների մասին՝ ներկայացնելով նաև այդ փոփոխությունները և փոփոխված տեղեկությունները.

2.3. Բորսան իրավունք ունի.

2.3.1. հրաժարվել սույն պայմանագրով նախատեսված իր պարտականությունների կատարումից, եթե Թողարկողի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջները:

2.4. Թողարկողն իրավունք ունի.

2.4.1. Բորսայից պահանջել սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների ժամանակին և լրիվ ծավալով մատուցում:

**3. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1. Թողարկողը Բորսայի կողմից մատուցվող Ծառայությունների համար վճարումները կատարում է ՀՀ կենտրոնական բանկում գրանցված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ի «Սակագների մասին» կանոններով և «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլտվության կանոններ»-ով սահմանված սակագներին, ժամկետներին ու կարգին համապատասխան: «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ի «Սակագների մասին» կանոնները և «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլտվության կանոնները» գետեղված են Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում:

**4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

- 4.1. Թողարկողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Բորսային տրամադրված տվյալների հավաստիության և սույն պայմանագրով, ինչպես նաև Բորսայի կանոններով ստանձնած իր պարտականությունների կատարման համար:
- 4.2. Բորսան պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի կնքման համար Թողարկողի կողմից իրեն ներկայացված փաստաթղթերի հավաստիության համար:
- 4.3. Սույն պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

**5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

5.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև սյն պայմանագրի 1.1. կետում նշված Թողարկողի արժեթղթերի ապացուցակումը և/կամ առևտրի դադարեցումը՝ «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլտվության կանոններ»-ով սահմանված կարգով:

**6. ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐ**

6.1. Սույն պայմանագրի կողմերի միջև ծանուցումները և հաղորդագրությունները պետք է ձևակերպված լինեն գրավոր, ստորագրված սույն պայմանագրի կողմերի լիազորված անձանց կողմից և վավերացված կնիքով, հանձնված անձնապես (ուղարկողի օրինակի վրա ստացողի կողմից ստանալու վերաբերյալ նշում կատարելով), ուղարկված ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով (ստանալու վերաբերյալ ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկողին տեղյակ պահելով) կամ ուղարկված «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքին համապատասխան, բացառության այն դեպքերի, որոնք սահմանված են «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլտվության կանոններ»-ով:

**7. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 7.1. Սույն պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր ձևով:
- 7.2. Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը, ինչպես նաև կողմերի միջև ստանձնած պարտավորությունների վերաբերյալ վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:
- 7.3. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով՝ երկու հավասարազոր օրինակից՝ յուրաքանչյուր կողմի համար մեկ օրինակ:
- 7.4. Թողարկողը սույն պայմանագիրը կնքելուց առաջ ծանոթացել է ՀՀ կենտրոնական բանկում գրանցված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ կանոններին և անհրաժեշտ այլ նորմատիվ իրավական ակտերին:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**

<p><b>Թողարկող</b> (նշվում է հասցեն, կապի միջոցները, ՀՎՀՀ, բանկային վավերապայմանները, պայմանագրի ստորագրողի անուն ազգանունը և պաշտոնը)</p> <p>_____ /ստորագրություն/ Կ.Տ.</p>	<p><b>Բորսա</b> (նշվում է հասցեն, կապի միջոցները, ՀՎՀՀ, բանկային վավերապայմանները, պայմանագրի ստորագրողի անուն ազգանունը և պաշտոնը)</p> <p>_____ /ստորագրություն/ Կ.Տ.</p>
---	--

**Ձև ԱՑ-1.2**

(արժեթղթի ցուցակման և/կամ առևտրին թույլտվության հայտ)

**ՀԱՅՏ**

(թողարկողի անվանումը, կազմակերպական - իրավական ձևը)

(թողարկողի պետական գրանցման համարը և ամսաթիվը)

առաջարկում է «Հայաստանի Ֆոնդային Բորսա» Բաց Բաժնետիրական Ընկերության կանոններին համապատասխան (ցուցակել \_\_\_\_\_ ցուցակում / ընդգրկել Բորսայի \_\_\_\_\_ ազատ շուկայում)

(նշվում է բորսայական ցուցակը)

(նշվում է (C) կամ (CBond))

Ընկերության հետևյալ արժեթղթերը՝

արժեթղթերի դասը (տեսակը)	
արժեթղթերի քանակը	
արժեթղթերի ձևը	
անվանական արժեքը	
տեղաբաշխման գինը	
արժեթղթերի տեղաբաշխման ձևը (հրապարակային կամ փակ տեղաբաշխում )	
արժեթղթերը թողարկված (տեղաբաշխված) են համաձայն (նշվում է արժեթղթերի թողարկման մասին որոշում ընդունող իրավասու մարմնի (անձի) անվանումը ( անուն, ազգանունը), որոշման ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը)	
թողարկողի գործունեության հիմնական տեսակը	
թողարկողի գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները	

Միաժամանակ «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ին վերապահում ենք իրավունք՝ մեր կողմից ներկայացված արժեթղթերն ընդգրկել իր կանոններով սահմանված չափանիշներին բավարարող բորսայական ցուցակում կամ ազատ շուկայում, եթե ներկայացրած արժեթղթերը չեն բավարարում մեր կողմից նշված բորսայական ցուցակում ընդգրկվելու համար:

**«Մենք հավաստիացնում ենք, որ սույն Հայտում պարունակվող տեղեկությունները ստույգ են և լիակատար գիտակցում ենք, որ դրանցում որևէ էական փաստի սխալ ներկայացում, խեղաթյուրում կամ բացթողում կարող է հանգեցնել ցուցակման և/կամ առևտրին թույլտվության մերժմանը և(կամ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառմանը»:**

Ստորագրող անձինք՝

_____ (անուն, ազգանուն)	_____ (պաշտոն)	_____ (ստորագրություն)	_____ (ամսաթիվ)
_____ (անուն, ազգանուն)	_____ (պաշտոն)	_____ (ստորագրություն)	_____ (ամսաթիվ)
_____ (անուն, ազգանուն)	_____ (պաշտոն)	_____ (ստորագրություն)	_____ (ամսաթիվ)

**«Մույնով թողարկողը պարտավորվում է արժեթղթի ցուցակման և/կամ առևտրին թույլտվության պահից մինչև դրա ապացուցակումը և/կամ առևտրի դադարեցումը պահպանել «Հայաստանի Ֆոնդային Բորսա» Բաց Բաժնետիրական Ընկերության կողմից հաստատված և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցված կանոններով սահմանված պահանջները»:**

Միաժամանակ հավաստիացնում են, որ Հայտը ստորագված է վերոհիշյալ անձանց կողմից.

_____ (անուն, ազգանուն)	_____ (Գործադիր տնօրեն, գործադիր մարմնի ղեկավար)	_____ (ստորագրություն)	_____ (ամսաթիվ)
-------------------------	--	------------------------	-----------------